Ա. Գրիւրի յաւելած

ՑԵԼԵԶՈՆ № 282

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 9 կիրակի մարտի 11 | տասնեւերկուերորդ տարի 1901

ԲԱՑԻԱԾ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Գլուխ Գ.

Պատկանեանը մէկ-մէկ ժամանակ համարեա ամենայն օր այցելում էր իւր բարեկամներին, ծանօթներին և գլխաւորապէս վաճառականական ակմբանոցը և այդ ժամանակ միշտ կարելի էր դեռ ակմբանոցի դահլիճը չմտած լսանալ, որ Պատկանեանն այդտեղ է. դեռ հեռուից լսւում էր նրա կոշտ ձայնը, բարձր ծիծաղը և մի տեսակ կոշտ հազը: Մէկ-մէկ ժամանակ էլ նա ամսով չէր երևում. ամենքն էլ գիտէին, որ նա այդ միջոցում մի մեծ բան է գրում: Եւ ճշմարիտ, երկար բացակայութիւնից յետոյ, նա երևում էր ու անպատճառ մի նոր բան էր բերում կարդալու, իսկ եթէ բան էլ չէր բերում, շուտով լրագրներում տպագրւում էր նորա մի նոր գրուածքը:

Պատկանեանը իւր գրուածքները գրում էր համարեա միշտ մի որ և իցէ դէպքի առթիւ: Եթէ այդ դէպքը վերաբերում էր նախիջևանցւոց կեանքին, առնուած էր տեղական կեանքի երևոյթներից, նա գրում էր Նախիջևանի բարբառով, եթէ ընդհանուր Հայոց կեանքին—, գրական լեզուով: Եղաւ կարնոյ կոտորածը—, նա գրեց «Կարինի կոտորածը», «Կարինի Սոխակը»: [5]) Պալասանեանի և Սունդուկեանցի 25-ամեայ յոբելեանի առթիւ նա սկսել էր գրել և մի ողբերգութիւն, որ կրում էր «Անուոյ առուսն» վերնագիրը: Նա ցանկանում էր այդ ողբերգութիւնը ներկայացնել տալ Նախիջևանի Թատերասիրաց ընկերութեան շարժական բեմի վերայ նոյն իսկ յոբելեանի օրը, ուստի և հրաւիրել էր ընկերութեան դեկավարներից մէկին լսելու ողբերգութեան արդէն պատրաստի մասը և իւր կարծիքը յայտնել: Բայց նորա այդ դիտաւորութիւնը գլուխ չեկաւ, որովհետև նա չ'վերջացրեց այդ ողբերգութիւնը: Բանաստեղծը, երևի, ինքն էլ չ'հաւանեց իւր գրածին և կիսատ թողեց. նա թատերական բաներ գրելու տաղանդ չունէր:

Նախիջևանցիք շատ են սիրում մեծածախ ճաշերով յարգել քաղաքը այցելող մեծամեծ մարդկանց.

---

[5]) «Կարինի Սոխակը», որ հանդուցեալը գրեց իւր հաքւում եղած ժամանակ, մեծ ոգևորութիւն առաջ բերեց: Իսկոյն, և եթ այդ երգի խօսքերը եղանակի վերածուեցին և ձեռքէ ձեռք անցնելով, տարածուեցին բոլոր Հայերի մէջ. Ինչը բանաստեղծն իւր այդ երգն ուղարկելով այդ ժամանակ Նախիջևան իւր բարեկամներից մէկին, գրել էր. «Ուղարկում եմ ձեզ ամենա-МОДНЫЙ և ամենանոր երգը, որի և եղանակը և խօսքերը գիտես ումն են. ամեն տեղ երգւում է և թնդացնում է սրտեր. . . . . : Բոլոր Կաւկաս երգւում է»:

նոքա այդ հայկերոյթների համար ոչինչ չեն խնայում։ Սերը դէպի այդ տեսակ հասարակաց ճաշերը նոցա մէջ այնքան մեծ է, որ հայկերոյթներին մասնակցում են մինչև անգամ և այն մարդիկը, որ ուրիշ դէպքերում ամենալաւ գործի համար անգամ խուսափում են մի սև կոպէկ տալու։ Ահա մի այդպիսի մեծաձախ ճաշի առիթ Պատկանեանը գրել է իւր «Ֆուբեռնաթոռին հայը» ոտանաւորը։

Մի ձմեռ տեղիս թատերասիրաց ընկերութիւնը մի շարք գրական երեկոյթներ սարքեց։ Այդ մի խումբ մարդկանց ցանկութեան հետևանքն էր, մարդկանց, որոնք զզուած լինելով ակմբանոցի կեանքի դատարկութիւնից՝ թղթախաղից և ուրիշ անիմաստ և անօգուտ զուարճութիւններից, յորդորում ու խրախուսում էին թէ ակմբանոցի վարչութեանը, թէ թատերասիրաց ընկերութեան դեկավարներին, որ նոքա ձեռք ձեռքի տուած զանազանութիւն մտցնեն ակմբանոցի կեանքի մէջ, որ և՛ օգտաւէտ լինի և զուարճալի։ Այդ երեկոյթները մեծ յաջողութիւն ունեցան, որովհետև մուտքի գները շատ մատչելի էին և երեկոյթների ծրագիրը զանազանակերպ։ Թատերասէրները դաշնամուրի, ջութակի և մինչև անգամ թառի վերայ նուագում էին զանազան կտորներ, Հայոց և Ռուսաց լեզուով ընտիր ոտանաւորներ, պատկերներ և վէպիկներ էին կարդում, մինչև անգամ երգում ու պատմում էին։ Ինչ ասել կուզի, որ Հայոց լեզուով կարդացուածները լինում գլխաւորապէս Պատկանեանի Նախիջևանի քնարից, գրական լեզուով գրուած ոտանաւորներից և Նախիջևանի բարբառով շարադրուած նորա արձակ գրուածներից։ Մենք յիշում ենք, որ նորա արձակ գրուածներից այդ երեկոյթներին կարդացուեցին «Իսալի լէվէնդը», «Վարժապետը», «Վարթևորը» և «Նամակները»։ Պատկանեանը շատ սիրով յաճախում էր այդ երեկոյթներին, հետաքրքրուում էր և օգնում էր սիրողներին իւր խորհուրդներով, կարդալու նիւթերի ընտրութիւն էր անում. մինչև անգամ բանաստեղծի ամուսինն էլ մասնակցում էր երեկոյթների երաժշտական մասին։ Հասարակութիւնը օգտուելով բանաստեղծի ներկայութիւնից և կամենալով նորան մի բանով վարձատրել նորա աշխատանքի համար, միշտ համարեա, երբ կարդացուում էր նորա մի որ և է գրուածքը, խլացուցիչ ծափահարութեամբ բեմն էր հանում նորան և մեծ ցոյցեր անում։ Հանդուցեալը կարմրած ու շփոթուած դուրս գալով, գլուխ էր տալիս և շտապում էր շուտով հեռանալ բեմից։ Այդ առաջին անգամն էր, որ ես տեսնում էի տեղիս հայերին իւրեանց մէջ ապրող ազգի բանաստեղծին այդպիսի յարգանք և պատիւ տալուս. մինչև անգամ էլ այդ կրկնուեց Ներսէս Ղահլամեանի Նախիջևանում առաջին անգամ տուած համերգի ժամանակ։ Երբ որ համերգի վերջում շնորհալի երգիչը սկսեց երգել «Օրօրոցի երգը», բոլորի աչքերը դարձան դէպի էստրադի մօտ նստած բանաստեղծը և այնպիսի բուռն ոգևորութեամբ ծափահարութիւններ եղան նորա հասցէին, որ ինքը երիտասարդ երգիչն էլ ոգևորուելով, սկսեց ծափահարել նորան։ Գրական երեկոյթները թէև այնուհետև այլևս չկրկնուեցին, բայց նոքա առիթ տուին Պատկանեանին ձեռնարկել գրելու մի շարք նախիջևանի բարբառով գրուածներ, որոնք կրում էին մի ընդհանուր անուն՝ «Պարկենդանքի նախերգներ»՝ «Խորթ-լախ», «Հին տուն և նոր տուն» և այլն։

Պատկանեանը իւր գրական լեզուով գրած բանաստեղծութիւնների և արձակ գրուածների մէջ արտայայտում էր իւր հասարակական իդէալները, իսկ տեղական բարբառով գրուածների մէջ — իւր մասնաւոր կեանքին վերաբերեալ դիտումները։ Առաջին դէպքում երևում է նորա հասարակական կեանքը, երկրորդում նորա մասնաւոր կեանքը. առաջնում Պատկանեանը վերացական է, գաղափարական է, իդէալական է, երկրորդում — իրական, շրջապատուած մասնաւոր կեանքի երևոյթներով, առօրեայ մանր շահերով և էնտրիգներով։

Առհասարակ դեռ մինչև ցայսօր մեր մէջ Պատկանեանի բարբառով գրած երկերի մասին մի որոշ գաղափար, կրիտերիում չէ կազմուել։ Ոմանք նոցա մասնաւոր կեանքի արդիւնք համարելով, կարծում են, որ նոքա միայն նշանակութիւն ունեն տեղական կեանքի համար, իսկ հայ հասարակութեան ահագին մեծամասնութեան համար նոքա համարեա թէ նշանակութիւն չունին, որովհետև նոքա թէ լեզուի և թէ կեանքի զանազան երևոյթների բացատրութեան տեսակէտից բոլորովին անհասկանալի են մեծամասնութեան։ Այդ կարծիքով է, երևի, զեկավարուել նորա գրուածների և վերջին հրատարակիչը, իւր հրատարակութեան մէջ բարբառով գրուածներից շատ քիչ բան տպագրելով, լաւ ընտրութիւն չանելով, լիակատար բառարան չկազմելով և առհասարակ երկրորդական և երրորդական տեղ տալով նոցա։ Ոմանք էլ նորա տեղական բարբառով գրուածներից շատերը պասքուիլի տեղ ընդունելով նոցա Պատկանեանի գրչին անարժան և նորա անձի համար անպատուութիւն են համարում և արհամարանքով են վերաբերում դէպի նոցա։ Այդ երևաց հանդուցեալի «Սատանի ոջիլ» վերնագրով գրուածքը տպա-

գրելու ժամանակ: Մի խումբ պարոններ այնպիսի զայրոյթով բողոքեցին նորա դէմ, կոչելով նորան, որքան մենք լիշում ենք, «պասքուիլ» որ մինչև անգամ այն լրագիրը, խմբագրութիւնը, որի մէջ տպուում էր գրուածքը, ստիպուեց կիսատ թողնել և չվերջացնել տպագրութիւնը, նամանաւանդ որ գրաքննիչն էլ հակառակ էր: Մենք ամենայն ուշադրութեամբ կարդացած լինելով նորա նախիջևանի քնարը և թէ նորա միւս բարբառով գրուածները, ուսումնասիրած լինելով նոցա մէջ արտայայտուած և՛ կեանքի երևոյթները և դուրս բերուած անձնաւորութիւնների տիպարները, չենք կարող համաձայնել ոչ առաջինի և ոչ երկրորդի հետ: Ճիշտ է, նորա այդ գրուածներից մի քանիսը՝ «Կայսիան», «Պամպուլիոսը» և այլ ևս մի քանի չնչին բաներ պասքուիլի բնաւորութիւն ունեն, ճիշտ է, Պատկանեանը իր այդ գրուածները գրելուս միշտ Համարեա մի որ և է անձնական շարժառիթ է ունեցել, բայց նոքա իրրև երգիծաբանական գրուածներ մեր գրականութեան մէջ ունեն նոյնքան մեծ նշանակութիւն, որքան այդ տեսակ գրուածները ունենում են առհասարակ ուրիշ գրականութիւնների մէջ: Մեր ինչ գործն է, թէ Պատկանեանը ինչ շարժառիթով է գրել իւր այս ինչ կամ այն ինչ երգիծաբանական գրուածքը. մենք պէտք է նայենք միայն, թէ արդեօք նորա այդ գրուածների մէջ դուրս է բերած տիպարներ ճիշտ են, պատկերները բնական են. բնութիւնները համապատասխան են իրեանց կենդանի օրինակներն, կեանքը համաձայն է հայ հասարակութեան կեանքին, սարք ու կարգին, ձգտումներին, հասկացողութիւններին: Իսկ այս տեսակէտից նայելով գործի վերայ, մենք դժուարանում ենք հաւատալ, որ կարող է գտնուել մեր մէջ մէկը, որ ցոյց տայ, թէ այս ինչ կամ այն ինչ անճշտութիւնը կայ նորա բարբառով գրուած երկերից մէկում, այնքան ճիշտ կերպով է դուրս բերած նոցա մէջ տեղիս Հայ հասարակութեան համարեա բոլոր դասակարգերին պատկանած մարդկանց պատկերները, տիպարները, այնքան ճիշտ է նկարագրուած նոցա մէջ հայկական կեանքը: Կարդացէք «Հին և նոր տունը», նորա մէջ դուրս է բերած աղայի տիպարը զանազան անաղնիւ ճանապարհներով և խարդախ միջոցներով հարստութիւն ձեռք բերած հայ աղայի տիպար չէ միթէ. «Ծէի խաճաճը» զանազան յանցաւոր միջոցներով փառքի և պատուի հասած հայ մարդու պատկեր չէ միթէ. «Խելի լէվէնդը» հայ անբարոյական, ընտանեկան սրբութիւն, կեանքի մաքրութիւն չսիրող, չճանաչող ամուլ-

ների տիպար չէ. «Փոռսուխին Աւազը» հայ մակաբոյծների, տղէտ, «փոր քալցնող» մարդկանց ներկայացուցիչ չէ. «Ռաղկեզոնի» գործող անձինքը տգէտ, բայց ամեն բանի մասին դատողութիւն անող, ամեն բանի մէջ խառնուող հայերի պատկերներ չեն. «Վարժապետը» վերին աստիճանի զաւակասէր, իւրեանց զաւակներին արտաքոյ կարգի ընդունակութեան տէր համարող և իւրեանց այդպիսի վարուեցողութեամբ իւրեանց հարազատներին անբարոյականացնող տղէտ հայ ծնողները չեն: Եւ որքան մեծ, անսպառ հեգնութիւն, անկեղծ ծիծաղ և երգիծաբանական զաւեշտ են ներկայացնում իւրեանց մէջ նորա այդ գրուածները:

Առնենք հէնց նոյն իսկ «Սատանայի ոջիլը», որի տպագրութեան դէմ մեր լրագրութեան մէջ այնքան աղմուկ բարձրացաւ: Միթէ կարելի է հերքել այն ճշմարտութիւնը, որ մեր կեանքի մէջ գոյութիւն ունին մի շարք այնպիսի հոգևորականներ, որոնք թէև՛ բնէ խելօք են, բայց միակողմանի, յամառ, իւրեանց ասածի են, կարգ ու կանոն չեն ճանաչում, ոչ մի սիստեմ չունին, չեն կամենում համակերպել ժամանակի հոգուն, տրամադրութեան, որով և, փոխանակ այն օգտին, որ նոքա կարող էին բերել հայ հասարակութեան իւրեանց բնական խելքով, իւրեանց հայկական զգուտութեան մեծ պաշարով, հմտութեամբ, իւրեանց կրօնասիրութեամբ, եկեղեցասիրութեամբ, իւրեանց կեանքի և անձի մաքրութեամբ, իւրեանց անշահասիրութեամբ և ջերմեռանդութեամբ, միայն վնաս են բերում: Ասում են, և այդ շատ հաւանական է, որ Պատկանեանը այդ հոգևորականի տիպարը նկարելուս աչքի առաջ է ունեցել Հանդուցեալ Կիւրեղ եպիսկոպոսին, և հէնց այդ է, որ գլխաւորապէս յարուցել է սորա նորա զայրոյթը: Եթէ մենք մի փոքր անկեղծութեամբ վերաբերենք և սառնասրտութեամբ քննութեան ենթարկենք «Սատանայի ոջիլ» գրուածքը, կ'տեսնենք, որ իսկապէս այդքան զրդռուելու, զայրանալու, յուզուելու և բողոքելու բան էլ չկայ: Եկէք ձգենք գրուածքի միջից նորան զարդարող, նորա ֆարուլը կազմող զանազան սեթևեթները, որ յատուկ են ամեն մի այդ տեսակ երգիծաբանական գրուածքի, և մէջ տեղը կ'մնայ մի յամառ, միակողմանի զարդացած, շատ բան իմացող, բայց սիստեմ չունեցող հոգևորական, որպիսին էր իսկապէս և Հանդուցեալ Կիւրեղը:

Պատկանեանին չէ կարելի մեղադրել, որ նա կեանքի միջից ընտրելով մի որ և է անձնաւորութիւն, ներկայացնում էր նորան իրրև տիպար մի

ամբողջ դասակարգին։ Բանաստեղծը, հեղինակը իրան շրջապատող կեանքի ճիշտ հայելին է, որի մէջ արտացոլուում է բոլոր հասարակութիւնն իւր առաւելութիւններով և պակասութիւններով։ Ի՞նչպէս էք կամենում, որ Պատկանեանի նման սուր դիտողութիւն, հոտոտելիք ունեցող հեղինակն ուշադրութիւն չդարձնէր մի այնպիսի տիպիք անձնաւորութեան վերայ, ինչպիսին էր Կիւրեղը, որ եկեղեցու բեմից հազարաւոր ժողովրդի առաջ բարձրաբարբառ քարոզում էր, թէ «լրագիրն ինչ է, որ նորա համար քսանհինգամեակներ էք կատարում, կամ Պատկանեանն ով է, որ ուզում էք նորա յօբելեանը տօնել, նորա ամենալաւ գրուածքը «Մայր Արաքսի»-ն է, այն էլ արաբերէնից է թարգմանած» և այլն և այլն։ Մեզ այդ դէպքում, յայտնի բան է, կարող են պատասխանել, թէ այդ բոլորը ճիշտ է, բայց նորա բարբառով գրուածները վերաբերում են միայն Նախիջևանին, առնուած են միայն տեղական կեանքից, ուստի և անհասկանալի են մեւս տեղերի Հայերին։ Մենք դորա դէմ կասենք, որ, նախ, նորա բարբառով գրուածների նիւթը միայն տեղական կեանքից չէ, նոցա մէջ կան և այնպիսիները, որոնց քննութեան, վերլուծութեան առարկան առնուած է ընդհանուր Հայկական կեանքից, երկրորդ, որ Հայոց կեանքի երևոյթները ընդհանրապէս ամեն տեղ էլ այնքան միատեսակ են, որ համարձակ կարելի է ասել, որ Պատկանեանի նկարագրած Նախիջևանի կեանքի երևոյթները, դուրս բերած տիպարները բոլորովին նման են մեւս քաղաքների և տեղերի Հայ Հասարակութիւնների կեանքի երևոյթներին և տիպարներին։ Միակ արգելքը միայն լեզուն, բարբառն է, որ միատեսակ բոլորին հասկանալի չէ։ Սակայն այդ արգելքն էլ, մեր կարծիքով, հեշտ է վերացնել, արժէ միայն այդ գրուածները հրատարակողներին մի փոքր աւելի աշխատանք յանձն առնել և լիակատար բառարան կցել նոցա։

Ե. Թահափիզ

(Կրշարունակի)

ԵՐԵԿՈ՞Ց Է...

—

Երեկո՞յ է. զաղջ երեկո՞յ մը հիւանդ.
Վերջալոյսը հիւծած, ժժգոյն կըմարի,
Մինչ գոհարներ զերթ պսպղուն աղամանդ
Կըփայլփլին խորը երկնի կամարի։

Երեկո՞յ է, մանիշակներն քաղցրաբոյր
Կըպահուըտին տերևներու ծոցին մէջ,
Մեղմ զեփիւռը փայփայելով զերթի համբոյր,
Անոնց շունչը կըտարածէ օդին մէջ։

Երեկո՞յ է. քնութիւնը դալկահար
Կըքնանայ մտաւախտով փաթթուած,
Մինչ իմ սի՛րտս, սիրտս անքո՛ւն վշտահար
Լուռ կըհեւայ, հին յուշերով պարուրուած...

Բագու Հրաչ Վահէ

ԲՕՔՐՆԵՐԸ ԵՒ ԻՐԱՆՑ ՆԵԽԱԳԱՀ ԿԻՒԴԵՐԸ

I

Մի տարուց աւելի է, որ լուսաւորուած մարդկութեան ուշադրութիւնը դարձած է հարաւային Ամերիկայում գտնուղ հեռաւոր երկիրներով։

Դրանք Հարաւ-Ամերիկեան և Օրանժեան հանրապետութիւններն են։ Հարաւ-Ամերիկեան հանրապետութիւնը կոչուում է նաև Տրանսվաալ, այսինքն Անդրուաալ, որովհետև նա ընկած է Օրանժ անուանով մեծ գետի հիւսիսային (աջ) վտակը կազմող Վաալ գետի աջ կողմը, դէպի հիւսիս. իսկ նոյն գետի հակառակ կողմը, դէպի հարաւ, ընկած են անգլիական գաղութները —Նատալն ու Կապի երկիրը և Օրանժեան հանրապետութիւնը։ Վերջինս այդպէս է անուանւում այն պատճառով, որ գտնուում է Օրանժի և Վաալի մէջ տեղը։

Ահա տարի ու կէս է, որ այնտեղ—բարեբեր դաշտերում ու հովիտներում, բազմաթիւ բարձր լեռների վրայ և արևադարձային ճոխ անտառներում—եռում է արիւնահեղ պատերազմ։

Պատերազմը ծանր և սարսափելի գործ է։ Նա տասնեակ հազարաւոր մարդկանց զրկում է կեանքից, նա միլիօններ է կուլ տալիս, խանգարում է մարդկային կեանքի կանոնաւոր հոսանքը, խանգարում է խաղաղ բնակիչների հանգստութիւնը, աւերում, ոչնչացնում է այն բոլորը, ինչ որ մարդը ծանր աշխատանքով ձեռք է բերում իր բարօրութեան համար։ Պատերազմը անհուն վշտերի պատճառ է դառնում։

Բայց աւելի ծանր և աւելի վշտալի է այն ժամանակ, երբ մենք տեսնում ենք, որ պատերազմը վարում է շահագիտական նպատակով, երբ ամբողջ մարդկութեան աչքի առաջ ուժեղը յարձակւում է թոյլի վրայ, ցանկանալով իր անձնական շահի համար, անարդար կերպով նրան զրկել, օգտւելով իր ուժից։

Ահա մի այդպիսի պատերազմ է վարում Հարաւային Ամերիկայում Ահագին և հզօր Մեծ-Բրիտանական կայսրութիւնը (Անգլիան), որ լայնատարած երկիրներ և հարիւրաւոր միլիոններ ազգաբնակութիւն ունի երկրագնդի բոլոր հինգ աշխարհամասերում, ուզում է հպատակեցնել իր իշխանութեանը ազատ Տրանսվաալի ու Օրանժեան հանրապետութեան մի բուռն ազգաբնակութիւնը։

Բայց այդ երկու ամերիկական փոքրիկ պետութիւնների ազգաբնակութիւնը քաջ է. սիրում է իր հայրենիքը և ամենից առաջ ուզում է ապրել իր սովորական կեանքով, առանց կողմնակի միջամտութեան։ Նրանք համարձակ

կերպով վերկացան թշնամու դէմ և վճռեցին պաշտպանել իրանց անկախութիւնը: Պարտքի գիտակցութիւնը և իրաւացի լինելու համոզմունքը մեծ ոյժ են: Եթէ անգլիացիները ուժեղ են իրանց զօրքի քանակութեամբ, Տրանսւաալը և Օրանժեան Հանրապետութիւնը ուժեղ են հայրենիքի և ազատութեան գաղափարով, որը անվերջ ոգեւորում է նրանց համեստ ռազմական ուժերը:

Ճիշտ է, վերջ ի վերջոյ անգլիացիները սկսեցին յաղթել, և հիմա այդ փոքրիկ ազատ, անկախ պետութիւնների լինել չլինելու ճակատագրական հարցն է դրւած, բայց դա աժան չրնստեց անգլիացիներին. Քանի՛-քանի սքանչելի հերոսական տեսարաններ տւեց պատմութեանը այդ մի բուռն ժողովուրդը. քանի՛-քանի՛ սպարտական Լէօնիդասներ ընկան պատերազմի դաշտում՝ անմահ անունն թողնելով ապագայ սերունդներին. . Բայց ո՛վ է այդ փոքրիկ հերոսական ժողովուրդը:

Նրանք իրանք իրանց անւանել են «բօէրներ» կամ «բուրեր», այսինքն գիւղացիներ, գիւղական ժողովուրդ: Եւ ամեն մի բօէր՝ բարձր ս՛ւան ետևից չընկնելով՝ հրապարակում է իր անունով, որը իր իմաստով աշխատասէր, բանւորական բնաւորութիւն է կրում: Բօէրները բացի այդ անունից ուրիշ անուն չունին: Այնտեղ ամենքը գիւղացիներ են և միևնոյն ժամանակ ամենքն էլ տէրեր են. այնտեղ ամենքն էլ հաւասար են՝ սկսած ամենահարուստից մինչև ամենավերջին աղքատը:

Բօէրները մեծ մասամբ հոլլանդական ծագում ունին: Դեռ 16-րդ դարում, երբ փոքրիկ, աշխատասէր Հոլլանդիան, որ մի փոքրիկ եւրոպական պետութիւն է, տանջւում էր օտարազգիների, սպանիացիների ասպատակութիւնից,—նրանք իրանց մայր երկրից սկսեցին գաղթել դէպի Հարաւային Աֆրիկա: Հայրենիքում նրանց նեղում էին օտարազգիները, չէին թողնում, որ նրանք ապրեն այնպէս, ինչպէս իրանք էին ուզում, կամ աղօթեն Աստծուն այնպէս, ինչպէս աղօթում էին իրանց հայրերն ու պապերը... Հոլլանդացիները բողոքական էին, իսկ նրանց թշնամիները կաթոլիկներ: Ի հարկէ, ամենից շատ նեղւում էր երկրի ազգաբնակութիւնը: Օրէցօր աւելի էր վատթարանում նրանց կեանքը և խեղճերը վերջապէս վճռեցին թողնել հայրենի երկիրը: Նրանք իրանց ընտանիքներով և ունեցած չունեցածով նաւերով ճանապարհ ընկան և երկար ու վտանգաւոր ճանապարհ անցնելուց յետոյ՝ հասան Հարաւային Աֆրիկայի ափերը: Նրանց հետ էին և ֆրանսիական բողոքականների—հուգենոտների սերունդները, որոնք իրանց հայրենիքից հալածւած՝ գտնւում էին Հոլլանդիայում: Այստեղ նորեկ գաղթականները, բարեբախտաբար, այնպիսի մի բարեբեր երկիր գտան, ուր կարելի էր ազատ ու անկարիք ապրել: Հողը գերապանց էր, վաստակաւոր գիւղացին որտեղ էլ վարելու, ինչ էլ ցանելու լինէր, ստանում էր հացի առատ հունձ, այն էլ բարձր յատկութիւնով.. Եւրոպայից բերած բոյսերի և հացազգեաների սերմերը, որ առաջ այստեղ չրկային, այնպիսի աջող հունձ էին տալիս, որպիսին չէին տալիս իրանց մայր երկրում: Խոտատեղերը պարարտ, կլիման առողջարար..

Բայց կային և ուրիշ, շատ ծանր և վտանգաւոր հանգամանքներ, որ ամեն մի րոպէ սպառնում էին մաղկացին կեանքին: Եկւորներին շատ անհիւրընկալ կերպով դիմաւորեցին տեղական բազմաթիւ կաֆրական ցեղերը: Զուլուսները, մատաբելները, բազուտոսները և ուրիշ, աւելի փոքր ցեղերը, որոնք յայտնի են իրանց վայրենութեամբ, արիւնարբութեամբ և միևնոյն ժամանակ քաջութեամբ, սկսեցին թշնամաբար վերաբերել սպիտակամորթ եկւորներին: Բօէրները շարունակ վախենում էին անսպասելի յարձակումներից և ապրում էին այնպէս, ինչպէս սովորաբար ապրում են պատերազմի ժամանակ: Բացի տեղական վայրենի ցեղերից՝ նրանք կռւում էին և վայրենի գազանների դէմ:

Սկզբի տարիներում այդ նոր երկրում պէտք էր գործ դնել անխոնջ աշխատանք ու կոիւ:

Բայց ինչեր չեն կարող անել հաստատ կամքը և անխոնջ աշխատանքը... Բօէրները շարունակ յաղթում էին արգելքները և աւելի ու աւելի էին կանոնաւորում իրանց կեանքը: Նրանք սկսեցին գիւղեր ու քաղաքներ շինել, և երբեմն տեղական վայրենի ցեղերի հետ համաձայնութիւններ կայացնել: Սակայն միշտ հարկաւոր էր լինում նրանցից զգուշանալ: Բայց հողը բոլորին էլ բաւականանում էր, թէ՛ հողագործութեան և թէ՛ անասնապահութեան համար: Բօէրները, որ այնքան նեղութիւններ էին կրել իրանց մայր երկրում, Հոլլանդիայում, հիմա գոհ էին իրանց վիճակից: Այստեղ գոնէ չէին ճնշում նրանց ազատութիւնը, նրանց խիղճը:

Այդպէս անցան երկար տարիներ, անցան ամբողջ դարեր: Այդ հարուստ երկիրը գրաւեց անգլիացիների ուշադրութիւնը: Փոքր առ փոքր Անգլիան հպատակեցրեց բօէրներին և այն երկիրը, որ մինչև այդ ժամանակ պատկանում էր Հոլլանդական գաղթականներին, ընկաւ Մեծ-Բրիտանիայի իշխանութեան տակ, որն այստեղ գաղութներ հիմնեց: Հոլլանդացիների ապրուստը այդ ժամանակից օր օրի վրայ վատացաւ:

Այս վերջացող 19-րդ դարի առաջին կիսում բրիտանացիները այնքան նեղեցին Հոլլանդական ծագում ունեցող ազգաբնակութեան՝ որ նա վճռեց ծովափնեայ երկրից շարժւել դէպի ցամաքի ներսը, ուր մինչև այդ ժամանակ սպիտակ մարդու ոտք չէր կոխել: Պէտք էր նորից ճանապարհներ բանալ խիտ անտառներում, նորից մրցել գիշատիչ գազանների հետ, նորից պատերազմել տեղացիների դէմ: Մարդկային եռանդը, աշխատասիրութիւնը և անվեհերութիւնը նորից յաղթանակեցին: Բօէրները երկու պետութիւն հիմնարկեցին—Տրանսւաալը և Օրանժեան պետութիւն: Սկզբից այդ պետութիւնները անգլիացիների իշխանութեան տակ էին գտնւում, բայց 1852 թ. ից նրանք անկախութիւն ստացան:

Երեք այդպէս էլ կրշարունակէր: Բայց, դժբախտաբար Տրանսւաալում ոսկու հարուստ հանքեր գտնւեցին: Ոսկին, որ միշտ ճակատագրական դեր է խաղացել մարդկային կեանքում, հիմա էլ եղաւ վէճերի և անհամաձայնութիւնների պատճառ: Ոսկի որոնելու համար՝ Եւրոպայի ամեն ծայրերից այստեղ հաւաքւեցին բազմաթիւ արկածախնդիր և շահախնդիր մարդիկ: Բայց այդ բախտախնդիր մարդկանց մեծ մասը անգլիացիներ էին, և այդ բանը ժամանակի ընթացքում առիթ տւեց Անգլիային նորից չիշելու, որ այդ երկու հանրապետութիւնները առաջ օգտւում էին իր հովանաւորութիւնով, և այդ պատճա-

ռով նա նորից հպատակեցրեց նրանց իր իշխանութեանը: Դա տեղի ունեցաւ 1877 թ.ին: Բօէրները չէին ուզում օտար տիրապետութիւն և շատ քիչ ժամանակ համբերեցին—ընդամենը երեք տարի: Նրանք համերաշխ կերպով, ինչպէս մի մարդ, ապստամբեցին 1880 թ.ին և անվեհերութեամբ դիմաւորեցին անգլացիներին: Նրանց ժպտում էր և պատերազմական բախտը: Մաջուբայի մօտ տեղի ունեցած պատերազմում անգլիական զօրքերը պարտութիւն կրեցին և շուտով անմահ Գլադստոնի շնորհիւ, տրանսւաալցիների և Մեծ-Բրիտանիայի մէջ հաշտութիւն կնքուեց, քաջ բօէրների համար շատ ձեռնտու պայմաններով: Բօէրները վերջնականապէս անկախ ճանաչեցին...

Բայց, ինչպէս երևում էր, Անգլիան ժամանակաւոր կերպով էր թողել իր ձգտումները: Անցեալ տարի նա նորից պահանջներ արեց Տրանսւաալից: Բօէրները չընդամձայնուեցին և մեծ յոյս ունենալով եւրոպական պետութիւնների միջամտութեան և օգնութեան վրայ, սկսեցին պատերազմական գործողութիւնները: Մինչև այդ ժամանակ անգլիական տիրապետութեան դէմ կռւում էր միայն Տրանսւաալը, բայց հիմա նրա հետ դաշն էր կապել և Օրանժեան հանրապետութիւնը: այդ պատճառով անգլիացիները այս անգամ մեծ դժուարութիւնների հանդիպեցին և մի շարք պարտութիւններ կրելուց և մօտ 300 հազար զօրք բերելուց յետոյ միայն սկսեցին յաղթել բօէրներին:

Այո, անվեհեր բօէրները սկզբից մի քանի փառաւոր յաղթութիւններ տարան անգլիացիների դէմ, և շատերը յոյս ունէին, թէ անգլիացիները ոչ միայն չեն կարող հպատակեցնել իրանց ապօրինի իշխանութեանը բօէրական տէրութիւնները, այլ նոյն իսկ կըկորցնեն իրանց հարաւաֆրիկական կալւածքների մի մասը, եթէ ոչ ամբողջովին, ինչպէս անցեալ, 18-րդ դարու վերջում նրանք կորցրին Հիւսիսային Ամերիկայի իրանց բոլոր գաղութները՝ բացի Կանադայից:

Բայց պատերազմը երկարեց, երկու կողմից տասնեակ հազարաւոր զոհեր եղան, որ բազմաթիւ անգլիացիների համար շատ զգալի չըլինելով հանդերձ՝ շատ զգալի է մի բուռն բօէրների համար: Շատ առաջնակարգ բօէրական հերոսներ, ի թիւս որոց և նրանց տաղանդաւոր զօրապետ, Ներունի դիւցազն Ժուբեր, որ սկզբից այնքան հակառակ էր պատերազմին, ընկան պատերազմի դաշտում պակաւած անմահութեան դափնիներով. և վիճակուեր Անգլիան սկսեց յաղթել փոքրիկ բօէրական ժողովրդին, որի անդամները, 15 տարեկան պատանիներից սկսած մինչև 60 տարեկան Ներունիները, կենք էին բարձրացրել իրանց ազատութիւնը պաշտպանելու համար: Այդ օրհասական ժամանակն էր, որ բօէր կանայք, ազատութեան սուրբ գործով ոգևորւած, պատերազմի դաշտը նետեցին և սկսեցին պատերազմել անգլիացիների դէմ, թէ առանձին վաշտերով և թէ իրանց ուժասպառ եղած ամուսինների և եղբայրների հետ թև թևի տւած: Տեղի ունեցան սրտաշարժ և անմահ տեսարաններ... Կրկնւեցին 5-րդ դարում տեղի ունեցած մեր Վարդանանց պատերազմի տեսարանները... Բայց ինչ կարող էին անել բօէրուհիները անգլիական թնդանօթների դէմ: Անգլիան շարունակեց իր յաղթութիւնները, համարեա տիրապետեց երկու հանրապետութիւններին, բօէր գերիներով լցրեց Ս. Հեղինէի կղզին, որ գտնւում է Ատլանտեան ովկիանոսում, և հիմա հետամուտ է բօէրական զօրքի մնացորդը ոչնչացնելուն: Սակայն քաջարի բօէրները դեռ չեն յուսահատւում, խմբերով յարձակումներ են գործում անգլիացիների վրայ և ջլատում են վերջիններիս ուժերը: Իսկ Տրանսւաալի բօէրներից ընտրած հանրապետական նախագահ, 75-ամեայ Ներունի Կրիւգերը եկել է Եւրոպա օգնութիւն և միջամտութիւն խնդրելու յուսաւոր պետութիւններից: Եւրոպական հասարակութիւնները փառաւոր ընդունելութիւն են ցոյց տալիս Ներունի Կրիւգերին, մեծ ցոյցեր են անում ի պատիւ նրա և ամբողջ բօէրական ժողովրդի, բայց դեռ յայտնի չէ, թէ ինչ հետևանք կունենայ Կրիւգերի Եւրոպա գալը: Կըհպատակւե՞ն, արդեօք, նրանք անգլիացիներին, թէ նորից ձեռք կըբերեն իրանց անկախութիւնը կամ կրգաղթեն մի նոր տեղ, դէպի հիւսիս, Աֆրիկայի խորքերը...

Ֆ. Տ.-Ֆ.

(Վերջը միւս անգամ)

ԽՈՐԻՆ ՍՏԵՓԱՆԷԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Խորէն Ստեփանէի անսպասելի մահը բնականաբար աւելի մեծ ցաւ պատճառեց Ախալցխա և Ախալքալաք քաղաքների և երկու գաւառների հայ ժողովրդին, որի առաջնորդական փոխանորդն է եղել հանգուցեալը մօտ 15 տարի առաջ և որի սրտում դեռ շատ թարմ է նրա թողած անմոռանալի յիշատակը: Խորէն Ստեփանէն նշանակւեց Ախալցխայի և Ախալքալաքի վիճակի առաջնորդական փոխանորդ և միևնոյն ժամանակը Ախալցխայի Կարապետեան և Եղիսաբէթեան հոգևոր դպրոցների տեսուչ Արիստակէս Սրբեպիսկոպոս Սեդրակեանի առաջնորդութեան օրով, այն է՝ 1884 թ.ին. նա տեսուչ մնաց մինչև հայոց դպրոցների առաջին փակումը և կարճ միջոցում ներքին և արտաքին մեծ բարեկարգութիւններ մտցրեց իրան յանձնւած դպրոցների մէջ, ուր այդ ժամանակ սովորում էին մօտ 800 երկու սեռի մանուկներ: Նրա հրաւէրով և յորդորներով էր, որ Ախալցխայի հայ ժողովուրդը վեց հոգաբարձուներ ընտրեց՝ Կարապետեան ուսումնարանի այն ժամանակւայ կիսաւեր շինութիւնը նորոգելու համար: Նա շուտով կարգ ու կանոն մտցրեց և Ախալցխայի հոգևոր կառավարութեան մէջ և այն մեծ միջոց գործ էր դնում կարգապահութիւն և պարտաճանաչութիւն ներշնչելու իր վիճակի բազմաթիւ քահանաներին: Նա խօսքով և գրչով աշխատում էր մեր քահանաներին բարձրացնել, քահանայական կոչման բարձրութեան հասցնել, «բարոյական կեանքի ուղեցոյց դարձնել», ինչպէս ասում էր ինքը: Ո՞վ չէ յիշում 1884 թ. նոյեմբերի 1-ի նրա անմոռանալի շրջաբերականը, ուղղւած մեր քահանաներին: Այդ շրջաբերականը, որ տպագրւած է առանձին բրոշիւրով, դեռ երկար տարիներ կարող է ծառայել, իբրև ցանկալի ծրագիր ժամանակակից քահանայի նպատակայար-

մար գործունէութեան։ Խորհուրդ ենք տալիս բարի ցանկութիւն ունեցող մեր քահանաներին ձեռք բերել այդ շրջաբերականը և առաջնորդուել նրանով։ Ապա հանգուցեալի ոգեշունչ և թովչական քարոզները, որոնցով նա ոգևորեցնում և զմայլեցնում էր ամենքին, վառում էր իր բազմաթիւ լսողների սրտերը։ Նրա քարոզները չոր ու ցամաք, վերացական նիւթերի մասին չէին լինում, այլ հիմնւած էին լինում աւետարանի և կեանքի բազմակողմանի պահանջների և երևոյթների վրայ. նա ոչ միայն աշխատում էր աւետարանական ճշմարտութիւններ մտցնել ժողովուրդի մէջ, այլ և կենսական խրատներ էր տալիս՝ տնտեսական, առողջապահական և այլ հարցերի մասին։ Օրինակ՝ նա մի քանի անգամ Ախալցխայի մայր եկեղեցու բեմից խօսացել է պարտիզպանութեան և շերամապահութեան մասին և բերի օրինակ դառնալու համար՝ եկեղեցու բակում, իր բնակարանի մօտ, պարտէզ շինեց։ Ո՛վ չէ յիշում եկեղեցու բեմից լսուեցած նրա առողջապահական դասերը այն ժամանակ, երբ տիփը համաճարակ բնաւորութիւն էր ստացել Ախալցխայի ապգաբնակութեան բոլոր խաւերում։ Նա խորհրդակցում էր բժիշկների հետ և ապա նպատակայարմար յորդորներ էր կարդում ժողովրդին։ Նա խնամք էր ցոյց տալիս ոչ միայն դպրոցներում սովորող հիւանդ երեխաներին՝ բժշկի վարձ և դեղ մատակարարելով նրանց, այլ և օգնում էր քաղաքի բոլոր չքաւորներին՝ առանց կրօնի և ազգի խտրութեան։ Ամեն օր օգնութիւն աղերսող նամակներ էր ստանում նա հիւանդ չքաւորներից և բոլորին օգնելու համար միջոցներ էր հայթայթում, որով այնքան պատկառելի դարձաւ նա և օտարների, տեղական վրացիների, հրէաների, կաթոլիկների և տաճկների համար։ Հասկանալի է, թէ ընչի նրա մահը այնքան մեծ ցաւ պատճառեց և այդ օտարներին։ Ահա այսպէս Խորէն Ստեփանէի խօսքի և գործի մէջ տիրում էր կատարեալ համերաշխութիւն, այդ պատճառով էլ նրա խօսքը աւելի էր ոյժ ստանում, և նրա բարոյական ազդեցութիւնը և ձեռք բերած յարգանքը օր օրի վրայ աւելի էր մեծանում։ Նրա քարոզները խիստ կերպով տարբերւում էին աջահամբոյրով ոգեւորուող մեր հոգևոր հայրերի ճելեխայից դամբանականներից։ Նրա համար խաթր ասած բանը գոյութիւն չուներ։ Ճատերից մի օրինակ. Խորէն Ստեփանէի Ախալքալաքում եղած ժամանակ մեռնում է մի «զոռբա» մարդ. որդիները դիմում են վարդապետին, և ի հարկէ, առաջարկելով լաւ «աջահամբոյր», խնդրում են, որ նա դամբանական խօսէ, յուսալով, թէ նա կըդրւատէ իրանց ծնողի չունեցած արժանաւորութիւնները, ինչպէս սովորական է մեր արդի հոգևորականների մէջ։ Վարդապետը երկար ժամանակ չի համաձայնում, չընայած տեղական գործակալի մէջ. նորդութիւններին, և «զոռբա» դիակը շարունակ երկու օր սպասում է դամբանական։ Վերջապէս Խորէն Ստեփանէն համաձայնւում է խօսելու, բայց ինչ է ասում. երկար լուռ կանգնելուց յետոյ, սկսում և վերջացնում է մօտաւորապէս այսպէս. «Ինձ խընդրում են, որ հանգուցեալի մասին խօսեմ. երկար մտածում եմ, բայց ոչինչ լաւ բան չեմ գտնում խօսելու. այս. քանը կասեմ միայն, որ հանգուցեալի կեանքի սանդուղքի ծայրը ցած էր ընկած և նա շարունակ ցած էր իջնում նրանով. տայ Աստուած, որ հանգուցեալի որդիները սանդուղքի ծայրը դէպի վեր բարձրացնեն և նրանով շարունակ վեր բարձրանան»։ Եւ այս խօսքերը Խորէն Ստեփանէն ասաց «զոռբա» դիակի բազմաթիւ «զոռբա» որդիների և ազգականների ներկայութեամբ, արհամարհելով նրանց առաջարկած անարգ ոսկին։ Հասկանալի է, թէ ինչ տպաւորութիւն արած կըլի. Նեն այդ խօսքերը։ Սակայն, ինչպէս յայտնի է, «զոռբա» որդիները ոչ թէ չըբարձրացրին իրանց հօր ցած ընկած սանդուղքը, այլ նրան իջեցրին մինչև սանդարամետի խորխորատը։ Այդ տոհմի մի մասին հանգուցեալ եպիսկոպոսը յանճաս ասում էր. «եթէ այդ տոհմը չըլինէր, Ախալքալաքը շատ կողմերով աւելի բարձր կըլինէր...»—Միւս կողմից Խորէն Ստեփանէն հաստատ չափով ոգևորւում էր թէ ընդհանուր ազգային մեծ գործչի և թէ գաւառական մի համեստ գործչի յիշատակով։ Ո՛վ չէ յիշում Խորէն Ստեփանէի այն դամբանականը, որ նա, երիտասարդութեան հրաւէրով Ախալցխայից յատկապէս գալով՝ խօսեց Ախալքալաքի եկեղեցու բեմից վրդամեռ Տէր-Ստեփան Դեմիրճողլեանի գաղաղի վրայ, որը քարոզիչ, ուսուցիչ և հասարակական գործիչ էր Ախալքալաքում։ Դամբանականն ամբողջովին նւիրուած էր քահանայի կոչմանը,—Խորէն Ստեփանէն քարոզներ էր խօսում և գիւղական եկեղեցիներում։ Ի գիմաց հանգուցեալ եպիսկոպոսի բարձր ուսումը առաջին անգամ բարձրացաւ մեր գիւղական անուշ եկեղեցու բեմը։ Հանգուցեալ հռետորը միայն անզուգական քարոզիչ չէր, այլ և պրակտիկական արդիւնաւոր գործիչ։ Ի՜նչ փառահեղ եկեղեցական և դպրոցական հանդէսներ էր կատարում նա։ Նրա օրով Ա. խալցխայի և Ախալքալաքի եկեղեցիներում առաջին անգամ սկսեց լսուիլ կանոնաւոր երգեցողութիւնը։ Նա գալիս էր Ախալքալաք, ժողովում էր դասաւոր քահանաներին և նրանց դասեր էր տալիս, հանդէսների փորձեր էր անում, ցոյց էր տալիս, թէ այս կամ այն եկեղեցական տօնին ինչպէս պիտի կատարուի հանդէսը, և վայ այն ծոյլ քահանային, որ ամբողջութեամբ չի կատարի այս կամ այն եկեղեցական հանդէսը։ Այդ հանդէսների, երգեցողութեան և Խորէն Ստեփանէի յորդորների շնորհիւ՝ ժողովուրդը մեծ բազմութեամբ յաճախում էր եկեղեցի, իսկ հիմա նա կրկին սկսել է եկեղեցուց սառել։

Իր անսիջական պարտականութիւններից դուրս, բայց հոգևոր կոչման հետ սերտ կապ ունեցող ուրիշ գործեր էլ կատարեց Խորէն Ստեփանէն շատ կարճ միջոցում։ Տիփի ճարակելու միջոցին նա մտածեց բժշկանոց հիմնելու Ախալցխայի հայոց եկեղեցիներից մէկի բակում, ուր աղքատ ազգաբնակութիւնը, առանց ազգի և կրօնի խտրութեան՝ կարողանար ձրիապէս օգտւել բժշկական միջոցներից, նա տեղական բժիշկների հետ միասին ապագայ բժշկանոցի կանոնադրութիւնը կազմեց և ուղարկեց հաստատութեան։ Հայց Խորէն Ստեփանէի հեռանալու պատճառով, որքան գիտեմ, այդ համակրելի գործը մնաց կիսատ, և 15 տարի անցնելուց յետոյ Ախալցխայում հիմա են միայն կրկին մտածում հիւանդանոցի մասին։ Հայի դրանից, աղքատների համար նա Ախալցխայի և Ախալքալաքի եկեղեցիներում գանձանակ սահմանեց և ազ-

քատաց հոգաբարձուներ հիմնեց, որոնցից Ալաչկերտցին՝ որոշ կանոնադրութեամբ։ Ըղձիտեմ, Ալաչկերտի այդ աղքատաց հոգաբարձութիւնը հիմա ինչ դրութեան մէջ է, բայց մեր առաջնորդական փոխանորդ Խորէն Ստեփանէի հիմնած այստեղի մեր աղքատաց հոգաբարձութիւնը հիմա լուծած է միչեւճնորդի ձեռքով, և դանձանակատուփի մուտքն ու ելքը չանձնած է երէցփոխին. չէ որ հիմա մեզ ամեն բանում չետ են տանում... Խ. Ստեփանէն չըմ ուացաւ և ընթերցանութեան գործ։ Քահանաների մտաւոր բարոյական մակերեւոյթը բարձրացնելու համար՝ նա ընթերցարան բացաւ չաջորդարանի ներքին չարկի մի սենեակում, որից օգտւում էին քահանաները, ուսուցիչները և ուրիշ ինտելիգենտ անձնաւորութիւններ։ Իսկ Ալաչքալաչքի գրադարան-ընթերցարանի շինութիւնը աւարտելուց չետոյ եկեղեցական խափոր կատարեց եկեղեցուց մի չիչ ընթերցարանի շինութիւնը, մի փառաւոր հանդէսով օրհնեց այդ շէնքը, մեծ բազմութեան առաջ մի գեղեցիկ քարոզ լսուեց ընթերցարանների և ընթերցանութեան նշանակութեան մասին և ինքը, տեղական գործիչներին խրախուսելու համար, իսկոյն հիմնադիր անդամ գրեց։

Վերջապէս, Խորէն Ստեփանէի չորդորներով է, որ մինչև հիմա Ալաչքալաչքի վաճառականներն ու արհեստաւորները կիւրակի օրերը կանոնաւոր փակում են իրանց խանութները. միայն վաճառականները ազգաբնակութեան չարմարութիւնները աչքի առաջ ունենալով, հերթով մի խանութ բաց են պահում և այդ պատճառով մի որոշ վճար ևն տալիս չոգուտ վաճառականների դրամարկղի, որի մուտքը միշտ գործադրւում է բարի նպատակների։ Ս՛եր վաճառականները շատ երախտապարտ են Խորէն Ստեփանէի մտցրած այդ կիւրակնօրեայ հեթակալութեան համար։ Խորէն Ստեփանէն մտցրեց մեր երկու քաղաքներում գիշերւայ ժամերը և կէսօրւայ 12-րդ ժամը եկեղեցու զանգակով լսելու սովորութիւնը, որ շատ գործնական և նպատակայարմար միջոց է հասարակ ժողովրդի համար։ Այդ նպատակով և կիւրակի ու հանդիսաւոր օրերի համար, նա ժողովուրդի մէջ փող հանդանակեց և մի մեծ զանգակ ձեռք բերեց Ալաչկերտի Ս. Փրկիչ եկեղեցու համար, 700 րուբլի արժողութեամբ։—Առհասարակ հայր Ստեփանէի արդիւնաւոր գործունէութեան շնորհիւ՝ հասարակական նիւթատուութիւնները աւելացան հետզհետէ։

Խորէն Ստեփանէի Ալաչկերտում ունեցած կարճատև, բայց արդիւնաւոր գործունէութեան պատկերը լրացնելու համար, այստեղ աւելորդ չեմ համարում չիշել, որ նա իր «Մանկավարժանոցի» հրատարակութիւնը իր հետ տեղափոխել էր Ալաչկերտ և մեծ զոհողութիւնով ու զրկանքներով շարունակում էր հրատարակել, 40 վճարող բաժանորդ ունենալով միայն. մըննացած օրինակները ձրի բաժանում էր իր վիճակի ուսուցիչներին և շատից-քչից ինտելիգենտ երիտասարդներին։

Ահա թէ ինչպէս պիտի լինի հոգեւորականը, ահա թէ ինչ կարող է անել կրթւած, լուսամիտ, անշահասէր և եռանդուն անհատը, որպիսին էր Խ. Ստեփանէն։ Բացի իր անձնական այդ բարձր չատկութիւններից, նրա աչքի գործունէութեանը քիչ չընպաստեցին և պաշտօնի համեմատական ինքնուրոյնութիւնը և, մեր կարծիքով, այն ժամանակի մեր առաջնորդը։

Կրկնում ենք, Խորէն Ստեփանէն մարմնացած եռանդ և լուսաւոր ջահ էր իր ընդարձակ և հայաշատ վիճակի համար։ Այդ պատճառով էլ ժողովուրդը իր բարոյական ամբողջ ուժերով սիրեց և նուիրեց այդ ժողովրդական գործչին և թէ Ալաչկերտցից մօտ 900 ստորագրութեամբ խնդիր գնաց կաթողիկոսին, որ Խորէն Ստեփանէն եպիսկոպոս ձեռնադրէ և թէ Ալաչքալաչքի հայ հասարակութիւնից ու գաւառի բազմաթիւ քահանաներից։ Բայց երբ է մեր մէջ գործիչը վարձատրել կամ ժողովուրդի խնդիրը չարգել։ Ընդհակառակը, գտնեցին «հաչի-աղաների» ստորաքարշ խմբեր, բաղկացած այն ժամանակւայ քաղաքագլխից, երեցփոխներից, դպրոցական հոգաբարձուներից և մի քանի քահանաներից, որոնք չըտանելով Խորէն Ստեփանէի ճշմարտախօսութիւնը, օրինականութեան ու կարգապահութեան պահանջները և հարւածները՝ դիմեցին զրպարտութիւնների և ահա մէկը միւսի ետևից ամբաստանագիր տեղացին էջմիածին, կաթողիկոսը չետ կանչեց Խորէն Ստեփանէին, բայց ժողովուրդը, ինչպէս մի մարդ, վերկացաւ և սկսեց պաշտպանել իր պաշտելի գործիչին և իր իրաւունքները, սկսեց «ուզեհաններին» և «չուզեհաններին» յայտնի կռիւը։ Ժողովուրդը այդ անունով մկրտել էր Խորէն Ստեփանէին ուզողների և չուզողների կռիւը։ Չաղարաւոր ստորագրութեամբ խնդրագրեր և հեռագիրներ տեղացին էջմիածին թէ ընհանրապէս Ալաչկերտցի հայ հասարակութիւնից և թէ մասնաւորապէս տիկինների հասարակութիւնից։ Քննութիւն նշանակեց, Զրպարտողները Փիասկո կրեցին, ապա մեղայագրերով չետ առան իրանց ամբաստանութիւնները. ժողովուրդը օրինակելի կերպով պաշտպանեց իր իրաւունքները ստորաքարշ անձնասորութիւնների ոտնձգութիւններից։ Նոյն իսկ տեղական հրէաներն ու վրացիներն էլ իրանց պատգամաւորների միջոցով խնդրեցին, որ Հ. Խորէնը Ալաչկերտ թողնի։—Բայց և այնպէս Խորէն Ստեփանէն ստիպւած եղաւ շուտով հեռանալու Ալաչկերտից։ Սակայն ժողովուրդը և ինքը երբէք միմեանց չըմոռացան. դեռ մի տարի առաջ հանգուցեալը գրում էր, թէ Այւազովսկուց խնդրել է, որ մեծ պատկեր նկարէ Ալաչքալաչքի եկեղեցու համար և որ մեծ նկարիչը խոստացաւ։ Բայց ալաչքալաչքցիներին վիճակւած չէր հանճարեղ նկարչի ստեղծագործութիւնը ունենալու իրանց եկեղեցում։

Ալաչկերտից հեռանալուց չետոյ՝ Խորէն Ստեփանէի ձայնը լսւում է Պետերբուրգից, Ս. Խաչ վանքից և ընդհանրապէս Ղրիմի թերակղզուց։ Վերջապէս, նա եպիսկոպոս է ձեռնադրւում, ժողովուրդի խնդրելուց մօտ 10 տարի չետոյ միայն, և նորից նրա ազնիւ ձայնը հնչում է Աստրախանից, Բագւից, և ուր ոտք էր կոխում նա, կարծես կախարդական գաւազանի հարւածով ցնցում էր ճահճացած կեանքը, ապա կրկին աքսորւում է հեռաւոր վանքի խուցը...

Ահա, թէ ումից զրկւեց հայ եկեղեցին և հայ հասարակութիւնը, ինտելիգենցիան, գրականութիւնը։

Մաղաւուզեան *)

*) Խնդրում ենք չըշփոթել „Նոր-Դարի“ անցեալ տարւայ 156 րդ համարում տպւած, Ղուշուց գրած, թղթակցութեան տակը գրած „Մաղաւուզեան“ բոստորագրութեան հետ։ Այդ պատճառով մենք վերջին անգամ ենք այս կեղծանունը գործադրում։

XIX ԴԱՐԸ *

Ֆէօդալականութեան ու հոգևորականութեան կաշկանդիչ շղթաները խորտակելուց յետոյ, XIX դարի ընթացքում, կամ աւելի ճիշտ է ասել՝ բուրժուազիայի իշխանութեան օրով, գիտութիւնները էլ ազատ թռիչք են ստանում և մինչև այդ ժամանակ չըտեսնուած հսկայական քայլերով են առաջ գնում։ Ինքնութիւնների զանազան ճիւղերում մէկը միւսի յետևից այնպիսի գիւտեր են անում, որոնց մասին նախորդ դարերում ոչ միայն երազել չէրն կարող, այլ և երազողները անվերջ հալածանքների էլ կենթարկէլին։ Փարաճուխը, շոգին, գազը, էլեկտրականութիւնը, երկաթուղին, շոգենաւը, հեռագիրը, տելեֆոնը, փոնոգրաֆը, դինամօրը, Պաստեօրի հիմնած բակտերիոլոգիան, Լենտգենի ճառագայթները և այլն և այլն հռչակաւոր գիւտերը, որոնց անսահման բարիքները վայելում է և նամանաւանդ պիտի վայելէ ապագայում ընդհանուր մարդկութիւնը,— XIX դարի ծնունդ են։ Մենք դեռ չըսիշեցրինք այն գիւտերն ու կատարելագործութիւնները, որոնք տեղի են ունեցել տեխնիկայի, մեքենայագիտութեան, քիմիական, բժշկական և այլ ճիւղերում։ Այդ բոլորի մասին ընդարձակօրէն գրելու համար աւելի շատ էջեր են հարկաւոր քան մեր տրամադրութեան տակ ունեցածները։

Այժմեան ահռելի միլիտարիզմն էլ, իր վիթխարի զրահաւորներով, Կրուպի թնդանօթներով, Մաուզերի հրացաններով, առանց ծուխի վառօդով և «դում-դում» փամփուշտներով, XIX դարի ու բուրժուազիայի ստեղծագործութիւններն են։ Սակայն «կապիտալիզմը պատերազմ ու խլրտուններ չէ սերմում»,—ասում է Կ. Մարքսը, և իրաւի, քանի միլիտարիզմը զարգանում է, քանի պատերազմական գործիքները կատարելագործւում են, այնքան էլ պատերազմելու տենչը կարծես թէ սառչում է Եւրոպայում։ XIX դարը նախորդ դարերի համեմատութեամբ, ամենախաղաղ դարը կարելի է համարել, եթէ չըհաշուել Ռուս-թուրքական պատերազմներն ու Աֆրիկէյում և Ասիայում կատարած մի քանի էկսպեդիցիաները, այս անցնող դարի ընթացքում 2—3 մեծ պատերազմներ են միայն տեղի ունեցել, որոնցից ամենանշանաւորը Ֆրանսո-գերմանական պատերազմն է (1870 — 1871), որից յետոյ Գերմանիայի միութիւնն է կազմւում, իսկ Ֆրանսիայում վերջնականապէս հանրապետութիւն է հաստատւում։ Այնուհետև սկսում է գինաւորուած խաղաղութեան շրջանը։

Թանկ է նստում, շատ թանկ է նստում այդ գինաւորուած խաղաղութիւնը Եւրոպային, բայց որչափ էլ նրանք չեն աշխատում, ուրիշ ելք չեն կարողանում գտնել։ Այժմ նրանց արդիւնագործութիւնները ու կապիտալները միմեանց դէմ մրցելը այնչափ սաստկացել և այնպիսի սուր կերպարանք է ընդունել, որ միմեանց ահռելի զրահաւորների ու թնդանօթների շուքի տակ սիայն կարող են իրանց համար նոր ու նոր շուկաներ գտնել՝ թէ իրանց արտադրած անհամար ապրանքները վաճառելու և թէ անսահման կապիտալները շահաւէտ կերպով գործածելու համար։ Համարձակ կարելի է ասել, որ ամբողջ երկրագնդի վրայ այլևս չկայ մի անկիւն, որտեղ եւրոպական արդիւնաբերութիւնն ու կապիտալը ուժտք գործած չըլինին և որը առաւել կամ պակաս ենթարկուած չըլինի կապիտալիզմի ազդեցութեան։ Եւրոպան, Ամերիկան, Աւստրալիան, Աֆրիկէն և Ասիայի մի մեծ մասը թէ տնտեսականապէս և թէ քաղաքականապէս արդէն կապիտալիստական բուրժուազիայի տիրապետութեան տակ են գտնւում։ Ասիական հին մեծ պետութիւններից միմիայն Եապոնիան ինքնուրոյն կերպով զարգանալու և յառաջադիմելու ընդունակութիւն ցոյց, որի շնորհով և իր թէ տնտեսական և թէ քաղաքական անկախութիւնը պահպանեց։ Այդ դեղնամորթ ցեղը իր յառաջադիմելու ընդունակութիւններով կատարելապէս զարմացրեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհին. նա ոչ միայն իր մէջ տիրապետող ֆէօդալական կարգերը ոչնչացրեց, այլ և ճիշտ եւրոպական ձևով, ամենալայն սահմանադրական բեմի ընդունելով, ընդարձակ ճանապարհ բացեց կապիտալիզմի զարգացման առաջ և մի որ և է 25—30 տարուայ ընթացքում անասելի յառաջադիմութիւն ցոյց տուեց արդիւնաբերական, կրթական, պատերազմական և այլ բոլոր ճիւղերի մէջ։ Ճիկագոյի և Պարիզի ցուցահանդէսներում եապոնական արդիւնագործութեան արտադրութիւնները բոլոր այցելուների առանձին ուշադրութիւնն էին գրաւում և, չնայելով երկրի հեռաւորութեանը, փառաւորապէս մրցում էին եւրոպական արտադրութիւնների հետ։ Իսկ 1894 թ. Չինա-եապոնական պատերազմի և ներկայ 1900 թ. Չինաստանի մեծ դէպքերի ժամանակ Եապոնիան այնպիսի մի պատերազմական ու քաղաքագիտական հմտութիւն ցոյց տուեց, որ ամենայն իրաւամբ կարող է մեծ պետութիւնների շարքի մէջ մտնել։ Այն ինչ մրցասիական մեծ պետութիւնները, ինչպէս օրինակ Թուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը, որոնք այս կամ այն պատճառով չըկարողացան Թուսիայի ու Եապոնիայի նման ժամանակի պահանջներին յարմարել ու շարունակեցին իրանց նախկին քաղաքական կարգերը պահպանել, դրսից եկած կապիտալիզմը հոսանքին չըդիմանալով, շուտով տնտեսականապէս քայքայուեցին, մեծ պետութիւնների դրամական վասալները դարձան և բոլորովին կորցրեցին իրանց նախկին քաղաքական նշանակութիւնը։ Այդ երկիրները բացի սպառման շուկայ լինելուց, այժմ ուրիշ ոչ մի նշանակութիւն չունին եւրոպան բուրժուազիայի համար և հեռու չէ այն օրը, երբ մեծ պետութիւնները, վերջապէս մի որոշ համաձայնութեան գալով, միմեանց մէջ կըբաժանեն դրանց և այդպիսով վերջ կըդնեն նրանց ներքին քաղաքական անկախութեանը։ Իրանցից ամենից շատ կապիտալիզմի հոսանքին դիմադրութիւն ցոյց տուողը և նրա ազդեցութիւնից ամենայն չափաւորութեամբ պաշտպանուողը Չինաստանն է, բայց այդտեղ էլ եապոնական բուրժուազիան օգնութեան հասաւ և այնպիսի մի մեծ լուսանցք բաց արեց կապիտալիզմի առաջ, որ հազիւ թէ կարելի լինի նրան վերստին փակել։ Հակառակ Չինաստանի ներկայումս արած բոլոր ջանքերին, նրա ճակատագիրը որոշուած կարելի է համարել և ոչ մի «մեծ կամ փոքր բռունցքով» չէ կարելի այլ ևս երկրագնդին տիրացող բուժուազիային խանգարել Չինաստանին էլ տիրանա-

*) Տես Տարազ № 8.

լու և այնտեղ էլ իր պատմական դերը կատարելու...

Այսպէս ուրեմն, դեռ անցեալ դարի վերջերում նոր ոտքի ելած մանուկ կապիտալիստական բուրժուազիան այս մէկ հարիւրամեակի ընթացքում այնչափ զօրացաւ և այնպիսի ոյժ ձեռք բերեց, որ տիրապետեց ամբողջ երկրագնդին և այսօր, XIX դարի վերջում, նա յաղթական կերպով մուտք է գործում վերջին բնական տնտեսութեամբ ապրող երկիրը—Չինաստան։ Դա կապիտալիզմի վերջին կայարանն ու ամենամեծ շուկան է, որին նւաճելուց ու տիրապետելուց յետոյ կարելի էր կարծել, թէ այլ ևս բուրժուազիայի իշխանութիւնը հաստատուած է ընդմիշտ և նրա գոյութեանը այսուհետև ոչինչ չէ կարող սպառնալ։ Սակայն... աշխարհի երեսին յաւիտենական ոչինչ չկայ։ Ինչպէս որ ինքը—կապիտալիստական բուրժուազիան որդի նման ծնունդ ստացաւ ֆէօդալականութեան ծոցում ու նրա մէջ փոփոխուող տնտեսական, սոցիալական ու հասարակական նոր պայմաններից ու կարգերից սնունդ առնելով, աճեց ու այնքան զարգացաւ, որ լափեց քայքայեց ու վերջ ի վերջոյ խորտակեց նրան, ճիշտ այնպէս էլ կապիտալիզմի ծոցում ծնունդ ստացաւ մի այլ դասակարգ, որը բուրժուազիայի ստեղծած տնտեսական, սոցիալական ու հասարակական նոր պայմանների շնորհով նոյն պէս զարգացաւ, ոյժ ստացաւ և այժմ ամեն կերպ աշխատում է նրա—բուրժուազիայի իշխանութիւնը տապալել և իրանը հաստատել...

Ռ. Խ.

ԽՈՒՀԵՐ ԵՒ ԻՐԵՐ

—

Ուսումնասէր ժողովուրդ, շովինիզմ և իմ գաղափար. ւգու ոյժը. սպասելիք չունիմ. բարիքը չատագովել, չարիքը արմատախիլ անել. մեր դպրոցները. հայ բարերարներ. Թիոլ հեռու լինի: լաւ մարդ դառնայ. ուսումնասէր ժողովուրդ. պ. Գրիգոր Բայեանդուբեանց. եօթն դասարանեան առևտրական դպրոց. ապահովութեան հարց. Ծրագիր։

—

Մեր ժողովուրդը ուսումնասէր, հարցասէր ժողովուրդ է. այս ասելով ես հեռու եմ շովինիզմից և ժողովրդին շոյելու գաղափարից.—ես չէի ցանկանալ միայն հայոց ժողովրդի վատ կողմը տեսնել և միայն «դիպչել», «կծել», ինչպէս ասում են ժողովրդական ոճով. կամ ինչպէս ընդունած է մեր դեռահաս քննադատների մէջ՝ ես չէի ցանկանալ «աքլորութիւն» անել և ամբիոն բարձրացած՝ բարձր ոճով և մեծամտութեամբ միայն հայհոյել և ուղեղից խօսել։ Համոզուած լինելով հանդերձ, որ չափազանց քաղցր գործածելուց վչանում է ստամոքսը, իսկ դառն դեղերից կազդուրւում են հիւանդները,—ես կրկամենայի, որ ժողովրդի լաւ կողմը սիրէր, ոգևորութիւն ստանար, որ ինքը ժողովուրդը զգալով իր արժանաւորութիւնները՝ ինքնաճանաչ լինէր, իր բարոյական ոյժը հասկանար և իրան վերապահէր.—ես կրկամենայի, որ նա ասէր՝ «ես ունիմ այս լաւ յատկութիւնը, այս լաւ կողմը, այդ իմ արժանիքս է, ուրեմն ես էլ ունիմ արժանիք. ուրեմն գնահատեցէք իմ արժանիքս, իմ իրաւացի յատկութիւնս. մի բարոյական ոյժ կայ իմ մէջ—ես գնահատում եմ, դուք էլ գնահատեցէք»։

Ես այն տեսակ մտածողներից եմ, որ ընդունում եմ հոգու ոյժը, ներշնչման ոյժը և հաւատում եմ, որ յառաջադիմութեան գործի մէջ, ոգու գիտակցական և քաջալերուած ոյժը հրաշքներ է անում .. ինչպէս որ չափազանց քայլերեղէն գործածելուց փչանում է ստամոքսը, այնպէս էլ չափազանց դառն և կծու դեղերից կքայքայւէ անհատական կազմուածքը. լարը պէտք է ձգել, բայց չէ որ լարն էլ իր առաձգականութեան սահմանը ունի։ Կեանքը սիրելով, ոգին սիրելով, նոյն իսկ անյուսալի հիւանդին կարելի է ազատել։ Ըստ երևոյթին ես մի մոլեռանդ հաւատացող եմ,—այդպէս էլ պէտք է լինի... և ինչ սպասելիք ունիմ, իմ ընթերցող, որ ես դիմեմ շովինիզմի, ժողովրդի զգացմունքները շոյելու կամ գլւելու. այո, ես կը կամենայի վէրքերի վրայ նպեղանի դնել, ես կրկամենայի, ցրտից և խոնաւից հոգիներ պրծացնել, եթէ այդ ինձ յաջողւէր, ես շատ կըցանկանայի այդ անել—բայց ես երբէք չէի ցանկանալ իմ օրգանիզմս, գոյութիւնս և մտածողութիւններս ընդհանրապէս յարմարեց՝ և ժողովրդի կազմւածքի վրայ, նրա լաւ կողմերը տեսնելով հանդերձ. որովհետև բանականութիւնս ձգտում է ճշմարտութեան, զգացմունքս—գեղեցկութեան, իսկ կամքս—բարութեան։ Հրապարակախօսի համար յարմար է այս նշանաբանը, «առաքինութիւնը—բարիքը չատագովէ, և ոգի տուր, ձայրահեղ ոգի. չարիքը, նախատինքը նկատէ, և նրսեմացուր, արմատախիլ արա...»

Անցնենք թւերին, մօտ անցեալումն էր, որ Ալէքսանդրապոլում գոյութիւն ունէր հինգ ծխական դպրոց 2000-ից աւելի աշակերտուհիներով և աշակերտներով, չհաշւած նոյն քաղաքի քաղաքային դպրոցը, մօտ 300 աշակերտներով, իգական պրոգիմնազիան 300 աշակերտուհիներով, և հայ կաթոլիկ համայքի եկեղեցական փոքրիկ ուսումնարանը։ Եւ այս դպրոցների մէջ եղած աշակերտները և աշակերտուհիները, բացի իգական պրոգիմնազիայում դտնւածներից, միջին և հասարակ դասակարգի զաւակներ են։ Իսկ հրքան աշակերտներ և ուսանողներ դուրսը կան. մի քանի հարիւր հաշւում է Թիֆլիսում. ապա Երևանում, Բագւում, բարձրագոյն դըպրոցներում։ Եւ այդ պարոցները քաղաքիս՝ պահում էր և պահում է հայոց ժողովուրդը. նոյն ժողովուրդը հրքան դպրոցներ ունի բացած ուրիշ քաղաքներում. չեմ ասում անհատների մասին, բարերարների, որոնք անպակաս են եղել և անպակաս են և հիմա հայոց ժողովրդի միջից, ես մանրամասնութիւնների մէջ չեմ մտնիլ. կարծում եմ որ ամեն մի հայ պատկառանքով կըյիշէ Լազարեանների, Յովնանեանների, Սանասարեանների նման հիմնադիրների անունները, այնպէս և ուսումնասէր Ներսէս, Գէորգ, Խրիմեան հայրապետների անունները։ Սակայն մի՛թէ այդ պատկառելի անունները մի փոքրիկ ցանկով է վերջանում. ո՛չ. նրանք շատ են հայոց ժողովրդի մէջ։

Բայց Ալէքսանդրապոլի ժողովուրդը մի՛թէ չէր կարող չուզարկել հեռաւոր քաղաքներ իր զաւակներին, որ կապւած է մեծ դժւարութիւնների և ծախսերի հետ, մանաւանդ մինչև հիմա երկաթուղի չկար և նոյն իսկ Թիֆլիս գնալը բաւական երկար էր, ուր մի աց մայրաքաղաքները ո՛չ, չէր կարող, և դեռ սրանից 25, նոյն իսկ 30 տարի առաջ Ռուսիայի և արտասահմանի համալսարաններում ունեցել ենք մեր քաղաքից ուսանողներ։ Իսկ սրանից 30–35 տարի առաջ նոյն

իսկ Թիֆլիս ուղարկել որդուն սովորելու համար՝ նշանակում էր մեծ զոհաբերություն անել ծնողի կողմից ուսման գաղափարին, այո, «ուսման գաղափարին», որովհետև այն ժամանակ հեռու քաղաքներ և երկիրներ ուղարկելով երբեք գործնական նպատակ չէին բերում, ինչպես հիմա,— առաջ չէին բերում, ինչպես հիմա,— այսինքն ապրուստի հարցը գլխավորապես, այլ ասում էին՝ «Թող հեռու լինի, թող լաւ մարդ դառնայ, լսելօք մարդ դուրս գայ, ուսումնական լինի» —իսկապես բուն գաղափարական նպատակ. չէ որ այն ժամանակ ապրելը աւելի հեշտ էր, պահանջները աւելի քիչ էին... Եւ այդպիսի ցանկութիւնները, իղձերը մի՞թէ ժողովրդի հոգուց չէին բխում, ներքին կեանքի առանձնայատկութիւն չէր, ուսումնասիրութիւն, գիտութիւն, դպրոց սիրել չէր նշանակում... Երկար ջանք էր գործ դնում մեր քաղաքացին մի միջնակարգ դպրոց ունենալու համար, բայց նիւթական միջոցները և այլ արգելքները մինչև հիմա խանգարում էին: Եւ ինչ հաշիւ է որդուն ուսում տալ և կրթել աչքից հեռու, ընկնել խոշոր ծախսերի մէջ, քաշել նիւթական հոգացողութիւն, մինչդեռ իր քաղաքում էլ հնարաւորութիւն կար միջնակարգ դպրոց ունենալու. Այս հարցը հին հարց է, բայց աւելի երազական, քան իրական աւելի իրական դարձաւ այն ժամանակ երբ՝ ա. քաղաքում ինքնավարական վարչութիւն հաստատուեց, և բ. երբ Թիֆլիսի առաջի կարգի վաճառական պ Գրիգոր Յակոբեան Հայեանդուրեանցը, տեղեկանալով մօտ աղբիւրներից, որ մեր վաղաջը միջնակարգ դպրոցի պահանջ ունի, առաջարկեց քաղաքային վարչութեանը 2000 րուբլի տարեկան նպաստ, այդ նպատակի համար, քանի ինքը ողջ ու կենդանի է, իսկ մահուանից յետոյ խոստանում է կտակով լիովին ապահովացնել այդ միջնակարգ դպրոցը, նշանակելով այդ նպատակի համար անձեռնմխելի գումար մօտաւորապէս երկու հարիւր հազար րուբլու քանակութեամբ: Հարցը ստացաւ դրական ընթացք և այդ շնորհիւ պ. Գրիգոր Հայեանդուրեանցի, որովհետև նախ՝ նա դարձաւ սկզբնապատճառը (ինիցիատոր, initium), գրգռեցնելով այդ հարցը իր առաջարկութեամբ. երկրորդ—նա գրգռեցնելով այդ հարցը, տւեց դրական ընթացք, դրական որոշում—առաջարկելով առաջիմ տարեկան 2,000 րուբլի,—մեր քաղաքը մեծ շնորհակալութեամբ և առանձին հրճւանքով ընդունեց այդ առաջարկութիւնը, իրաւասուների յունւարի 16 ի ժողովում և նոյն ժողովում յանձնեց պ. քաղաքագլխին անձամբ գնալու Թիֆլիս և յայտնելու քաղաքի կողմից անկեղծ շնորհակալութիւն պ Գրիգոր Հայեանդուրեանցին և յայտնելու քաղաքի կողմից անկեղծ շնորհակալութիւն պ Գրիգոր Հայեանդուրեանցին և բարեգործի՝ հարցը որոշեց —այն է, մեր քաղաքում, Ալէքսանդրապոլում բացելու է միջնակարգ դպրոց. բարի գործ է, գեղեցիկ նպատակ և չափազանց ուրախալի երևոյթ մեր կեանքի համար. սակայն այդ միջնակարգ դպրոցը ինչ տեսակի է լինելու: Այս հարցին պատասխանում է մեր պ. քաղաքագլուխը, իր զեկուցումով, որը կարդաց նոյն ժողովում յունւարի 16-ին, առաջարկելով միևնոյն ժամանակ ապագայ միջնակարգ դպրոցի ծրագիրը: Ըստ այդ զեկուցման դպրոցը լինելու է առևտրական և եօթնդասարանեան —Թիֆլիսի առևտրականդպրոցի նման, որովհետև ա. այդ տեսակի դպրոցը աւելի նպատակայարմար է Ալէքսանդրապոլի համար և աւելի է ծառայում տեղական շահերին, պատրաստելով մասնագէտ վաճառականներ, որոնք հարկաւոր են մի քաղաքի համար, որը գտնւում է Պարսկաստանի, Տաճկաստանի և Ռուսիայի ճանապարհի վրայ և ապագայում միանալու է երկաթուղով Պարսկաստանի և Տաճկաստանի հետ. բ. եթէ բացի բէալական դպրոց կամ գիմնազիա, այս միջնակարգ դպրոցներից աւարտողները գնալու են բարձրագոյն դպրոց, մինչդեռ մեր քաղաքի ժողովրդի մեծամասնութեան մատչելի չէ բարձրագոյն դպրոցներում շարունակելու ծախսը, իսկ առևտրական դպրոցի մասնագիտական բաժնից աւարտողը կարող է ինքնուրոյն գործ գտնել. և գ. եօթնդասարանեան առևտրական դպրոցից ցանկացողները իրաւունք ունին շարունակելու բարձրագոյն դպրոցներում:

Ալէքսանդրապոլ. Berberis L.

ԿՈՒԱՎԱՐՁԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Правит. Вѣст.»-ում տպագրւած է.

«Վերջին ժամանակներս կայսրութեան մի քանի քաղաքներում տեղի ունեցած փողոցային անկարգութիւնների մանրամասնութիւնների մասին տարածող ստոյգ լուրերն ի նկատի ունենալով, ներքին գործերի մինիստրն անհրաժեշտ է համարում յայտարարել ի գիտութիւն ընդհանրութեան, տեղական իշխանութիւնների զեկուցումների հիման վրայ ունեցած հետևեալ տեղեկութիւնները.

«Փետրւարի 19-ին Պետերբուրգում, Կազանի տաճարում պատարագն ու ընդհանուր մաղթանքը վերջանալուց յետոյ, տաճարում գտնւած ուսանող երիտասարդութեան մի մասը, որի հետ միացան տաճարի դուռը կանգնած անձերը, խմբւեցին Կազանսկայա հրապարակը, տաճարի ու սքւէրի մէջ և, սիւնաշարի թևի մօտ, որի միջոցին ամբոխի մէջ գտնւող մի քանի անձեր փորձում էին ճառ խօսել: Ոստիկանութիւնը սլահանջեց, որ ցրւեն. խմբւածները մերժեցին, և ամբոխի մէջ լսւեց այս կոչը «Պարոններ, դիմեցէք ամենքդ խմբովին դէպի աջ, Նևսկիի կողմը»: Այս կոչին յետևելով, ամբոխն երգեր երգելով գարձաւ դէպի Նևսկի, բռնելով փողոցի մի մասը և ամբողջ մայթը: Անմիջապէս կանչւած ոստիկանական խումբը այդ ամբոխին քշեց Պետերբուրգի քաղաքային խորհրդարանի բակը, որի միջոցին ոչ ոք մի խեղում չըստացաւ: Խորհրդարանի բակում ցուցակագրեցին ամբոխին մասնակցողները թւով 244 հոգի, որոնցից, ինչպէս երևաց, 71 հոգի մայրաքաղաքի զանազան բարձրագոյն դըպրոցների ուսանողներ են, 128 հոգի կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներ, 20 հոգի ուրիշ կանայք և 25 հոգի կողմնակի անձինք. Ցուցակագրւածներն այնուհետև արձակւեցին իրանց տները. Ցիշեալ անկարգութեան մասնակցողների մասին քննութիւն է բացւած, որին օրինական ընթացք է տրւած:

Նոյն օրը Խարկով քաղաքում, տաճարում և համալսարանի եկեղեցում ժամերգութիւնը վերջանալուց յետոյ,

երբ ագօթողները տաճարից դուրս էին գալիս, նրանցից զատեցին համալսարանի, տեխնոլոգիական և անասնաբուժական ինստիտուտների 100 ուսանող և խմբովին դիմեցին դէպի համալսարանի շէնքն երգեր երգելով։ Որովհետև հրաժարուեցին հնազանդուել ոստիկանութեան պահանջին և չլկամեցան ցրուել, այդ անձերը շրջապատուեցին կանչուած մի հարիւրեակ կազակներով և տարուեցան ոստիկանական վարչութեան շէնքը։ Հետզհետէ կազմուեց ուսանող երիտասարդութեան մի համախմբում, որը պահանջում էր ազատ արձակել բռնուածներին։ Որովհետև ամբոխը, որի հետ միացան և շատ հետաքրքիրներ, մերժում էր ցրուել, ձերբակալուեցին նմանապէս այն անձերը, որոնք դրդում էին այդ անկարգութիւնը գործել։ Երեկոյեան ուսանող երիտասարդութիւնից բաղկացած մի ամբոխ, որի հետ դարձեալ միացան բաւականաչափ հետաքրքիրներ, փորձեց ցոյցեր սարքել «Южный Край» լրագրի խմբագրատան մօտ, դէպի ուր դիմեց երգելով, աղաղակելով և շւացնելով, բայց ժամանակին շրջապատուեց կանչուած զօրքերով և տարուց ոստիկանապետի վարչատունը ցուցակագրուելու։ Այս վերջին խումբը հեռացուելուց յետոյ, փողոցում մնացածների հետ նորից միացաւ զանազան կոչման տէր մարդկանց մի ամբոխ, որը դրամատիքական թատրոնի մօտ բղաւում, աղմկում և երգեր էր երգում։ Կաչուած զօրքերը յետ մղեցին ամբոխին հարեւան փողոցները և ապա ցրեցին նրան։ Թէև նահանգապետին ուղղ յայտարարութիւն էր տրուած ստացած խեղումների և հարուածների մասին, բայց գործն ստուգելուց և բժշկական քննութիւնից յետոյ հաստատուեց միայն մէկը։ Ցիշեալ անկարգութիւններին մասնակցողների մասին նոյնպէս քննութիւն է բացուած, և 136 ձերբակալուածներից 24 հոգի պահ.ած են հսկողութեան տակ, իսկ մնացածներն արձակուած են։

Փետրուարի 22-ին և 23-ին Մոսկուայում, օրւայ ժամը 12-ին, հին համալսարանի շէնքի մօտ սկսեցին հաւաքուել նախ համալսարանի ուսանողներ, և ապա նաև ուրիշ բարձրագոյն դպրոցների ուսանող, կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներ և ուրիշ կանայք։ Ընդունելով որ ոստիկանութիւնը պահանջում էր ցրուել, ամբոխն աւելի ու աւելի աճում էր և օրւայ ժամը մօտ մէկին, դռնապաններին հեռացնելով բակի վանդակապատից, մտաւ համալսարանի արտաքին բակը և ապա, դռները կոտրելով, մօտ երեք հարիւր հոգով ներս խուժեց հանդէսների դահլիճը, որտեղ ժողով գումարեց, հրաւիրելով որ փողոցում ու բակում կանգնած իրանց ընկերներն ևս, թւով նոյնպէս 300 հոգուց աւելի, մասնակցեն ժողովին։ Ընդ սմին ժողովականները գրգռում էին ամբոխին, ձգելով դէպի նա զանազան կոչեր։ Ինչպէս ոստիկանութեան յորդորները փողոցում, այնպէս և տես. չութեան յորդորները հանդէսների դահլիճում չկարողացան հաւաքւածներին ստիպել, որ ցրուեն և դադարեցնեն անկարգութիւնները, ուստի համախումբը փողոցի և համալսարանի բակի կողմից շրջապատուեց ոստիկանական խմբով և տարուեց մօտերքը գտնուած մանեժը։ Փողոցին մասնակցողները, համալսարանի բակը դուրս գալուց յետոյ, նոյն կարգով տարուեցին նոյն մանեժը, և ապա ցուցակագրուեցին բոլորը 630 հոգի, որոնցից, ինչպէս երևաց, 517 հոգի զանազան բարձրագոյն դպրոցների սաներ էին, 12 հոգի կողմնակի անձեր և 101 հոգի կին։ Բոլոր ձերբակալուածները շարունակում էին մանեժում աղմկել ու խրոխտանալ, չըհնազանդելով ոստիկանութեան ոչ մի պահանջի։ Երեկոյեան կանանց առաջարկուեց հեռանալ մանեժից և ցրուել իրանց տները։ այդ բանից օգտուեցին 93 կին, իսկ մնացած 8-ը կամեցան գիշերել մանեժում միւս ձերբակալուածների հետ միասին։ Առաւօտեան, փետրուարի 24-ին, ձերբակալուածներից 53 հոգի պահնորդախմբով ուղարկուեցին բանտը. լոյս փետր. 25 ի գիշերը մեժևոյ ինստիտուտի 21 ուսանող յանձնուեցին դպրոցական իշխանութեանը, իսկ մնացած 463 հոգին խումբ խումբ ուղարկուեցին աքսորական բանտը։ Փետրուարի 24-ին գլխաւորապէս ուսանող երիտասարդութիւնից բաղկացած ամբոխներ, որոնք երբեմն հասնում էին 700 հոգու, փորձում էին հաղորդակցութիւն ունենալ մանեժում գիշերող ձերբակալուածների հետ, խօսելով նրանց հետ այդ շէնքի մի քանի լուսամուտների իրանց ձեռքով ջարդած ապակիների միջից։ Ոստիկանութիւնը մի հարիւրեակ կազակների օգնութեամբ բազմիցս ցրում էր ամբոխուածներին այդ տեղից։ Բայց երեկոյեան ժամը մօտ 5-ին հետզհետէ հաւաքուած ամբոխը, մօտաւորապէս 300 հոգի, անցաւ Նիկիտսկայա փողոցով և Տւերսկոյ բուլւարով երգելով և աղաղակելով, իսկ այնտեղից մտաւ Տւերսկայա փողոցը, որտեղ Բրիւսովսկի նեղ փողոցի մօտ, գօրախմբի կողմից յետ մղուեց կողքի նեղ փողոցներն ու ցրուեց։ Լոյս փետրուարի 25-ի գիշերը, ժամը մօտ մէկին, աւելի քան 100 ուսանողից ու կանանցից բաղկացած մի ամբոխ, որին թոյլ չտրուեց մտնել Տւերսկայա, երգելով անցաւ Պետրովկայով և ոստիկանութեան կողմից յետ մղուեց Պետրովսկիա դրռների մօտ։ Կիրակի, փետրուարի 25-ին, հասարակ մարդկանցից բաղկացած մի ամբոխ, բարձրագոյն դպրոցների ուսանողների և կանանց զանազան կուրսերի ուսանողուհիների ղեկավարութեամբ, օրւայ ընթացքում անկարգութիւններ էր գործում քաղաքի նաև կենդրոնական մասում, ձգտելով ներս խուժել Տւերսկայա փողոցը. այդ փորձերի դէմն առան ոստիկանութիւնը և կազակների երկու հարիւրեակ։ Երեկոյեան դէմ երբ սանձարձակ ամբոխն սկսեց փշրել փողոցային լապտերների ապակիները Նիկիտսկայա մեծ փողոցում և Ստրաստ. նիյ բուլւարում, անկարգութիւնները վերջնականապէս դադարեցնելու նպատակով և ի նկատի ունենալով դիշերը, ոստիկանութեան օգնելու համար կանչուեցին Սումի դրագունների 3 րդ գնդի երկու էսկադրոն և ձեռնարկուեց անկարգութիւն անողների ձերբակալման։ Մի ամբոխ, մօտ 400 հոգի, շրջապատուեց և տարուեց մանեժը, իսկ մի ուրիշը, որը վայրագութիւններ էր գործում Սրտենսկիա դռների մօտ, տարուեց Վարաբեովի տունը։ Մանեժում և Վարաբեովի տանը բռնուածներին ցուցակագրելուց յետոյ, ձերբակալուեցին 16 ուսանող, երկու նախկին ուսանող և մի բժիշկ, իբրև անկարգութիւնների ղեկավարներ, մնացածներն արձակուեցին իրանց տները, իսկ ընդամենը, հաշուելով նաև վերոյիշեալներին, օրւայ ընթացքում, ոստիկանութեանը հակառակելուն և անկարգութիւնները ղեկավարելուն համար, ձերբակալուած է 34 հոգի, դրանց

Թուռմ 21 հոգի համալսարանի ուսանողներ և ուրիշ բարձրագոյն դպրոցների սաներ, 9 հոգի կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներ և 4 հոգի կողմնակի անձեր:

Փետրուարի 26 ին, օրւայ մօտ ժամը 2 ին, Օխոդնորեադսկաես հրապարակում, հաւաքւեց մօտաւորապէս 150 հոգուց բազկացած ուսանողների, կանանց և կողմնակի մարդկանց մի սմբոխ, որին ոստիկանութիւնը բաժանեց և որի մի մասը, մօտ 85 հոգի յետ մղւեց և տարւեց մանեժը, որտեղ ցուցակագրւեց: Բանից երևաց, որ նրա մէջ կայ 31 ուսանող, որոնցից երկուսը իբրև ամենից աւելի յանցաւոր, ձերբակալւեցին: Նոյն օրը քաղաքի զանազան մասերում փողոցային անկարգութիւններ սարքելու փորձեր անելու համար ոստիկանատներում կալանաւորւեցին 25 հոգի, որոնցից 15-ն ուսանող էին: Բռնաձերից հսկողութեան տակ են պահւած երկու տղամարդ և մի կին:

Կիրակի, մարտի 4-ին, օրւայ ժամը 2 ին, Տ: երսկոյ Ռուլւարում մօտ 70 հոգուց բազկացած ցուցարարների մի սմբոխ, որի մեծ մասը կազմում էին տեխնիքական դպրոցի սաներ, շրջապատւեց ոստիկանութեամբ և տարւեց հարևան մի տան բակը: Այդ սմբոխի ձերբակալման միջոցին հաւաքւեցին մի խումբ կանայք, որոնք աշխատում էին յարուցանել հետաքրքիրների համակրանքը ոստիկանութեան գործողութիւնները դատապարտելով. այդ կանայք. 9 հոգի նոյնպէս ձերբակալւեցին: Այնուհետև անկարգութեանը մասնակցողները թւով 67 հոգի ցուցակագրւեցին և նրանցից ձերբակալւած է տեխնիկական դպրոցի 11 սան, Մոսկւայի համալսարանի 1 ուսանող և 3 կին: Ցիշեալ օրերը Մոսկւայում տեղի ունեցող անկարգութիւնների ամբողջ ժամանակ ոչ մի ընդհարում ու ծեծ չի եղել սմբոխի ու ոստիկանութեան և վերջինիս օգնելու համար կանչւած զօրախմբերի մէջ յանցաւորներին բռնելիս ու ձերբակալելիս: Ռոլոք յանցաւորների վերաբերմամբ քրն. նութիւն են կատարում դպրոցական պատշաճաւոր վարչութիւնները ու մարմնաւոր իշխանութիւնները:

Սոյն մարտի 4-ին, Պետերբուրգում, առաւօտեան ժամը մօտ 11-ին, կազանսկի տաճարին սկսեցին մօտենալ զանազան կոչման տէր անձեր, որոնք տեղաւորւեցին տաճարի մէջ, շուրջը և հրապարակում: Ժամը 12-ի մօտերքն սմբոխը բաւականաչափ յղւեց մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցների ուսանողներով և կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներով, այնպէս որ տաճարի դուռը, սիւնաքարերը, սբւերը և կողքի անցքերն ամբողջովին բռնւեցին մօտ 3000 հոգուց բազկացած սմբոխով: Ոստիկանութիւնը պահանջում էր, որ ցրւեն, բայց ներկայ եղողների մեծ մասը ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում: Սմբոխի մէջ ձեռքէ ձեռք էին շրջում զանազան թերթիկներ, իսկ մի ուսանող տաճարի դռան մօտ սկսից բարձրաձայն մի կոչ կարդալ Պետերբուրգի ուսանողների կողմից զանազան պահանջներ անելով: Լսւեցին բացականչութիւններ, և ազմուկ ու աղաղակներ բարձրացան. այդ պատճառով ոստիկանական և կազակների մեծ խումբ կանչւեց, որը բոլորովին շրջափակեց համախմբումը հրապարակի վրայ և անջատեց նրան շրջապատող և մեծ մասամբ Նևսկի պրոսպեկտի վրայ կանգնած հասարակութիւնից: Երբ զօրքերն երևացին, շրջապատւած սմբոխը, դէպի տաճարի դռները նահանջելով, սկսեց զօրքերի և ոստիկանութեան վրայ զանազան առարկաներ նետել: Ընդ սմին մի քանի ուսանողներ փորձեցին ծածանել իրանց մօտ գտնւած զանազան մակագիրներ կրող կարմիր ու սպիտակ դրօշակները, որոնք նրանցից անմիջապէս խլւեցին: Տաճարի աջ կողմից սմբոխի մի մասը կուի մտաւ իրան ցրող ոստիկանների և կազակների խմբի հետ, գործելով ձեռնափայտերով և տաճարի դռան սանդուղքների վրայ գորգերն ափրացնող երկաթի ձողերով և շպրտելով կրկնակօշիկներ, սառած ձնակոյտեր ու քարեր: Այդ միջոցին սմբոխի միջից շպրտւած անկոչ մի մուրճ դիպաւ Նորին Մեծութեան պալատական գւարդիայի կազակ գնդի 2 րդ հարիւրակի հրամանատար եսաուլ Իսէևի գլխին և վիրաւորեց նրան. հարւածն այն աւելի սաստիկ էր, որ ցիշեալ սպան արիւնաթաթախ վայր ընկաւ: Այդ բանը տեսնելով, նրան շրջապատող կազակներն շտապեցին և շրջապատող ամբոխի մէջ կռիւ տեղի ունեցաւ, որի միջոցին վայրագութիւն դործողների մի մասը յետ մղւեց դէպի հրապարակը, շրջապատւեց զօրքով և ուղարկւեց կալանաւորւելու, իսկ մի մասը ներս ընկաւ տաճարը, որտեղ ոմանք գլխարկները չրվերցրին և նոյն իսկ Ցխախոտ էին ծխում. երբ զռնապանը նկատեց, որ դադարեցնել եկեղեցու մէջ այդ անկարգութիւնը, ուսանողներից մէկը ապտակ տւեց նրա դէմքին: Ընդհանրով եկեղեցու մէջ տեղի ունեցող անկարգութիւններին ու աղմուկին, ժամասացութիւնը շարունակւեց մինչև վերջը, իսկ ազօթողների մեծ մասն շտապեց դուրս գնալ տաճարից կողքի դռներով: Ս. սեղանի դռները փակւեցուց յետոյ աւագերեցը դուրս եկաւ բեմ անկարգութիւն անողներին յորդորելու համար, բայց ի զուր, և երբ առաջարկեց, որ տաճարից դուս գնան, ուսանողներից մէկը, որ կանգնած էր աւագերեցի ետևը, բռնեց նրա փարաջայի թևից և խորհուրդ տւեց որ ինքը հեռանայ, որպէս զի տհաճութիւնների չենթարկւի: Ցնուհետև սմբոխը յետ քաշւեց դէպի տաճարի յետին պատը խորհրդակցելու համար յետագայ գործողութիւնների մասին և մեծամասնութեամբ վճռեց դուրս չդալ եկեղեցուց մէկ-մէկ և ոչնչացնել իրանց մօտ գտնւած ամեն բան, ինչ որ կասկածելի է: Այդ միջոցին մտաւ ոստիկանութիւնը և մնացած սմբոխին թւով 300 հոգի, յորդորեց հեռանալ տաճարից և իր հետ գնալ Կազանեան մասը: Տաճարի հրապարակում անկարգութիւններ անողները հեռացւեցին օրւայ ժամը մէկին, որից յետոյ ոստիկաններն ու կազակներն ստիպւած էին մի քանի ժամւայ ընթացքում ցրել Նևսկի պրոսպեկտի վրայ, Սադովայա փողոցի և Պոլիցեյսկի կամրջի մէջ, դժբախտաբար, ահագին թւով հաւաքւած հետաքրքիրներին, որոնք խիստ խանգարում էին ոստիկանութեան գործողութիւնները: Ընդամենը բռնւած է մարտի 4-ին 760 հոգի, որոնցից 336 հոգի մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցների ուսանողներ են, 377 հոգի կին, գլխաւորապէս կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներ, և 44 հոգի կողմնակի անձեր: Ամբոխի հետ ունեցած կուի միջոցին վիրաւորւած է վերոյիշեալ եսաուլ Իսէևը և խիստ հարւած է

տրաճ մի պրիստաւի՝ փոխ-գնդապետ Վիլչևսկուն։ Բժշկական օգնութիւն պահանջող, բայց լուրջ բնաւորութիւն չունեցող հարուածներուն վերքեր են ստացել 20 ոստիկան և 4 կազակ, իսկ ձերբակալուածներից—18 տղամարդ և 14 կին։ Անկարգութիւնների հեղինակների մասին քննութիւն է կատարուում։

ՄԱՀՈՒԱՅՈՒՅԱԿ

† Ն. Պ. Բագալեպով՝

Հեռագիրը գուժեց լուսաւորութեան նախարարի՝ գաղտ. խորհ. Նիկոլայ Պաւլովիչ Բագալեպովի յաւալի մահը։

Հանգուցեալ նախարարը ծնուած էր 1847 թուականին։ Նրա հայրը դիւանագիտական էր։ Իր սկզբնական կրթութիւնը նա ստացել էր Մոսկուայի գիմ. նազիօններից մէկի մէջ և ուսման ընթացքը աւարտել էր ոսկէ մեդալով։ Այնուհետև նա փառաւոր կերպով աւարտեց իր ուսումը Մոսկուայի համալսարանում և 1872 թ. նշանակուեց կողմնակի ուսուցիչ հռովմէական իրաւագիտութեան նոյն համալսարանում։ Հռովմէական իրաւագիտութեան ուսումնասիրութեան մէջ նրա ղեկավարներն էին ուսուցչապետներ Կապուստին և Նիկոլսկիյ։ 1876 թ. իր մագիստրութեան դիսերտացիան աւարտելուց յետոյ, նա ուղարկուեց արտասահման, ուր լսում էր դասախօսութիւններ Հայդելբերգում, Գետտինգէնում և Պարիզում։ 1878 թուականից նա դասախօսում էր Մոսկուայի համալսարանում և 1881 թ. ստացաւ քաղաքացիական իրաւաբանութեան դոկտորի կոչումն։ 1883 թ. ին համալսարանական խորհուրդը ընտրեց նրան րեկտոր։ 1893 թ. նա նշանակուեցաւ Մոսկուայի ուսումնական շրջանի հոգաբարձու, իսկ 1898 թ. Բարձրագոյն հրամանով լուսաւորութեան նախարարութեան կառավարիչ և նոյն թուականի դեկտեմբերին լուսաւորութեան նախարար։

Ն. Պ. նախարարութեան ժամանակ առաջարկուած էր մշակելու ժողովրդական կրթութեան վերաբերեալ չափազանց նոր հարցեր և նրանց շարքում ամենանշանաւորն է միջնակարգ ուսումնարանների ուսման բարեփոխութիւնը։ Բայց ահա ցաւելով լսում ենք նրա մարտիրոսական վաղաժամ մահը։

ՍԱՀՈՂ ԹԱՄԵՐ

Ինչպէս յայտնեցաւ, տիկին Կ. Նադիրեանը, իր Արսենալի մօտ գտնուած գետինը նուիրել է Ներսիսեան դպրանոցին նոր շէնքը նրա վրայ կառուցանելու վճռապարտ ընդունել։ յիշեալ նուիրաբերութիւնը և արդէն նախապատրաստութիւններ են տեսնուում շէնքի կառուցման համար։ իսկ վանաց աւագ եկեղեցու մօտ գտնուած ջրմուխնապատկան գետնի վրայ, որ հոգաբարձութիւնը վճռել էր պարանոց շինել, Կաթուղիկոսի հրամանով շինելու են խանութներ։

—Քաղաքային վարչութեան և առանձին մասնաժողովի միացած նիստում վճռուել է՝ նշանակել մի ցանկ Յիլիանովի ապառաժը անվնաս կացուցանելու ծրագրեր մշակելու համար։ Առաջին վարձատրութիւնը ամենալաւ ծրագրի հեղինակին տալու՝ նշանակած է 800 ր., իսկ երկրորդին 300 ր։ Այդ բարձրավանդակը ապահովացնելու ծախքը մասնագէտների կարծիքով պէտք է արժենայ 23 ից մինչև 26 հազար րուբլի։

—Մօտ օրերս փորձեր պէտք է լինին առանց թելի հեռախօսով խօսակցել Մոսկուայի և Պետերբուրգի մէջ։

—Սխալքալաքից գրում են «Տիֆլ. Լիստ.» ին, որ այնտեղ ներկայ մարտ ամսի 5 ին կրկին երկրաշարժ է եղել։ Քաղաքի և գիւղերի ազգաբնակութիւնը սաստիկ վախեցած է։

—„Пр. Кр.“ լրագրի ասելով, վերջին տիրաժի ժամանակ 200 հազար րուբլին մտել է գիւղացի-վաճառական Տրոֆիմովը, իսկ 75 հազարը երգեցիկ հաստատարմատարի օգնական Բագինսկին։

—„Թիֆլիսի կրուժոկում“ Ա. Յ. Խատիսեան մի դասախօսութիւն կարդաց հետևեալ ծրագրով՝ **Ժողովրդական ճաշեր եւ նրանց կուլտուրական նշանակութիւնը**։ 1) Արհեստագիտական և մասնագիտական աշխատութեան ընդհանուր տեսութիւնը, աշխատանքի ազդեցութիւնը մշակ դասակարգի հոգեկան և մարմնական կողմերի վրայ, յոգնածութիւն, բարոյական և ֆիզիքական չափից դուրս խնդութիւն, զգայազրկութիւն, ալքոհոլիզմ և այլասերութիւն։ Չանգատութեան երկու տեսակ նշանակութիւնը՝ լուսաւորութեան ազդեցութիւնը ժողովր. կարստութեան, առողջութեան և բարոյականութեան վրայ, գիտութեան արժէքը տրնտեսական տեսակէտից, բերքրանքների և զարճութիւնների քնագիտութիւնը, ֆիզիքական մարզումները և գեղարուեստը որպէս ժողովրդական բարեկեցութեան մի կարգ դրդիչներ։ ժողովր. տների դասդասիարը և նրանց րնկերավարական նշանակութիւնը։ 2) ժողովրդ. տների ըստկիզբը Անգլիայում և Վայլտեր Բեզանտ րոմանը։ Համալսարանական գաղութ, University Extension որպէս ժողովրդին լուսաւորելու ձև։ ժողովրդական համալսարաններ Ֆրանսիայում, նրանց պատմութիւնը և արդի դրութիւնը, ժողովրդ. տները Հիւսիսային Ամերիկայում, Զուէդիայում, Նորուեգիայում, Իտալիայում և նրանց առանձնայատկութիւնները։ ժողտները Ռուսիայում։ ժողովրդ. տների կարևորութեան և նպատակայարմարութեան դէմ սպասելի րնդդիմախօսութիւններ։ ժողովրդ. տուն Թիֆլիսում։ Նրա ապագայ դերը։ Վերջաբան։

Գիտական

Անգլիայի Էդուարդ VII գահակալութեան օրը յայտնի գիտնական Մարկոնին կարողացաւ առանց մետաղալարի օգնութեան հեռագրական լուրեր հաղորդել մօտ 300 վերստ հեռաւորութեան վրայ։ Լսում է, որ նորերս հրաչակաւոր բնագէտ Տեսլան հօրը տարի աշխատելուց յետոյ միջոց է գտել առանց մետաղալարի հեռագրական լուրեր հաղորդելու աւելի հեռու տեղեր, օրինակ Ամերիկայից Եւրոպա։

Դպրոցական

Լուսաւորութեան նախարարի թոյլտուութիւնով Խարկովի արական գիմնազիոնը հրատարել է ֆրանսերէնի դասատուութեան համար ուսուցչուհիներ։

—Ամսոյս 7-ին Թիֆլիսի քաղաքագլուխը հաստատութեան է ներկայացրել նահանգապետին դումայի վճիռը, որով քաղաքը տալու է տարեկան 2000 ր. նպաստ Թիֆլիսում միջնակարգ նկարչական դպրոց բանալու համար։

Ժանապ. հաղորդակցութիւն

Հաղորդակցութեան նախարարութեանը խնդիր է մատուցած թոյլտուութիւն տալ հիմնելու Ռուսիայում ճանապարհորդութիւն կատարելը հեշտացնող ընկերութիւն։

—Հաղորդակցութեան նախարարու-

թեան յայտարարած տեղեկութիւններին համաձայն՝ արդէն հաղորդակցութեան համար բաց արած երկաթուղիների ցանցի երկարութիւնը մինչև 1901 թ. յունուարի 1-ը հասել է 51,431 վերստի, որից 41,781 վերստ եւրոպական Ռուսիայում, 7.107 վերստ ասիական և 2,593 վերստ Ֆինլեանդիայում։

Խառն լուրեր

Սալոնիկից հեռագրում են, որ Մակեդոնիայում օրերս կըսկսւի այն բուլղարների դատը, որոնք խռովութիւն։ ներ առաջացրին Թիւրքիայի սահմաններում։ Երկու հազար հոգուց աւելի մարդիկ մեղադրւում են այդ բանում։ Սուլթանի առաջին թիկնապահ Թուրխան փաշան արդէն Սալոնիկումն է և պէտք է նախագահէ զինուորական դատարանին։ Տեղական ազգաբնակութիւնը դժգոհ իրանց վիճակից, մի յայտագրով դիմեցին սուլթանին, նրա ուշադրութիւնը հրաւիրելով թուրք աստիճանաւորների գազանութիւնների վրայ Սալոնիկի, Մանաստիրի և այլ վիլայէթներում։ Այդ յայտագրի պատճէնները ուղարկած են նոյնպէս եւրոպական պետութիւններին, որոնց մէջ ազգաբնակութիւնը ցոյց է տալիս կատարելու Բերլինի դաշնագրութեան 23 յօդւածը, որով խոստացած է բէֆորմներ մտցնել Մակեդոնիայում։

—Нов. Обозр. Թեհրանից հաղորդում են, որ Թիֆլիսի պարսից նախկին ընդհանուր հիւպատոս Մուաւինի-Խովչէն ձերբակալւած է։

—Վերջերս չինական հարցը կարծէք նոր շրջանի մէջ է մտել այժմ քաղաքականութիւնը զբաղած է Մանջուրիայով, որի մասին համաձայնութիւն է կայացել Ռուսիայի և Չինաստանի մէջ։ Եապոնիային այս բանը դուր չէ եկել և դրա հակառակ իբր թէ մտադիր է իր գերիշխանութեան տակ ձգել Փոկիեն։ Բայց աւելի հետաքրքիր է անգլիական պատգամաւորների ժողովում Մանջուրիայի վերաբերութեամբ յարուցած հարցը, և թէ անգլօ-գերմանական համաձայնութիւնը չի տարածւում նաև Մանջուրիայի վրայ։ Կրոնբերն այս հարցին պատասխանեց, թէ համաձայնութեան առաջին յօդւածով երկու պետութիւններն էլ (Անգլիան և Գերմանիան) պայման են կապել պահպանել առևտուրի ազատութիւնը չինական գետերի մօտ գտնւած նաւահանգիստներում. երկրորդ յօդւածի մէջ ասւում է, որ երկու պետութիւններն չեն կամենում օգտւել ներկայիս բարդութիւններից Չինաստանում հողեր ձեռք բերելու և իրանց քաղաքականութիւնը կ'ուղղեն այն բանին, որ Չինաստանի հողերը չկրճատւեն։

—Ռուս. գործ. հեռագրում է, որ Պեկինի մօտ գտնւած մի հողաբաժնի վերաբերմամբ Անգլիայի և Ռուսիայի մէջ ծագած վէճը մնում է անփոփոխ։ Վէճող կողմերն իրար հետ բարեկամաբար են վարւում և իբրև նախազգուշութիւն՝ երկու կողմերն էլ քչացրել են իրանց պահապան զինուորների թիւը, որպէսզի բանակցութիւնների ժամանակ ընդհարում տեղի չունենան։ Համիլտոնը համաձնքների պալատում յայտնեց թէ երկիւղ չկայ, որ սրանից կարող է լսանգարւել խաղաղութիւնը։

—Չարաւ-Աֆրիկայում զինադադար է և բանակցութիւններ են տեղի ունենում խաղաղութեան մասին։ Բոթան գրաւոր յայտնել է Կիտչեներին իր պատրաստութիւնը իր կառավարութեան լուրջ խորհրդակցութեան առաջարկելու այն պայմանները, որ առաջարկել է Կիտչեները իրան։ Բոթան միաժամանակ յայտնեց, թէ իր կառավարութիւնը և բարձրաստիճան սպաները համաձայն են նրա հայեցքների հետ։

Այլ եւ այլ

Ցնցեցնող տրամայ։ Ամերիկայի Սենտ-Լուի քաղաքում կազմակերպած է էլեքտրական տրամւայ, որի վրայ չարմանեցրած է և տելեֆոն, որով կարող են օգտւել ձրի տրամւայ նստողները։ Այդ ճանապարհի վրայ տելեֆոնի ստորեւ կրեայ ձայնատար թելերը մշտապէս կապած են քաղաքի ձայնատար թելերի ցանցի հետ։

Իտալիայում վերջին ժողովրդագրութեան ժամանակ, որը պարտաւորական է բոլոր իտալացիների համար, ցուցակների մէջ մտցրել էին նոյնպէս թագաւորի և թագուհու անուններըր, հետևեալ ձևով՝

(Թագաւորի համար)

Անուն եւ ազգանուն. Վիկտոր—Էմմանուիլ Սաւոյեան, որդի Հանգուցեալ Հումբերտ Թագաւորի.

Բնակութեան տեղը եւ հասցէն. Հռոմի մէջ, Կվիրինալում։

Տարի եւ ծննդեան տեղը. 1869 Թ. Նէապոլում։

Ազգ է թէ ամուսնացած. ամուսնացած է։

Դրագիտութիւնը. կարդալ է կարդալ։

Դաւանութիւնը. կաթոլիկ։

Ապրուստի միջոցներ. հողային կալւածքներ և գործարաններ։

Ջբաղմունքը միակ, թէ գլխաւոր. միակ—Իտալիայի թագաւոր։

(Թագուհու համար)։

Անունը եւ ազգանունը. Ելենէ Չերնոգորցի, իշխան Նիկոլայ Չերնոգորիայի աղջիկը։

Ընտանիքի տիրոջ հետ ունեցած ազգակցութիւնը. Թագաւորի կինն է։

Ծննդեան տարին. 1873 Թ.

Դրագիտութիւնը. գիտէ կարգալ։

Զբաղմունքը. Իտալիայի թագուհի։

Այս բոլոր տեղեկութիւնները գրել է իր ձեռքով Վիկտոր Էմմանուէլ Թագաւորը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ Թիֆլիսի մէջ կառապանութիւնով պարապողների համար հաստատած սպրտաւորական կանոնների 13 յօդւածի հիման վրայ՝ յայտնում է ի գիտութիւն թեթև մարդատար և ծանր ապրանքակիրներին, որ նա նշանակել է ընտրութիւն աւագների և նրանց փոխանորդների այդ երկու ընկերութիւնների համար Քաղաքային վարչութեան շինութեան մէջ. առաջինների համար ներկայ մարտի 15-ին, ճաշից յետոյ ժամը 3-ին և երկրորդի համար մարտի 18-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, այդ պատճառով խնդրում է բոլոր կառապաններին շնորհ բերել վարչութեան կացարանը յիշեալ ժամանակին, իրանց ունեցած բլեախներով կամ թէ կառապանութիւնով պարապելու համար հաստատած կանոնների գրքոյկներով, ընտրութիւն կատարելու համար։

№ 1107. 1—3

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Թիֆլիս քաղաքի փողոցների մէջ գտնւող ծառատունկերը կպմում են քաղաքի և ոչ թէ տնատէրերի սեփականութիւնը։

№ 968 3—2

Արխիստական ընկերութեան թատրոն

Երեքշաբթի, մարտի 13-ին

Բագւայ հայ դրամատիկ դերասանական ընկերութիւնը ի նպաստ

Պ. ՕՐԸՓՕՏԵԱՆԻ և Ա. ՎՐՈՅՐԻ

Կը ներկայացնէ առաջին անգամ Սեւրանեսեան հռչակաւոր երկը

ԴՈՆ-ՔԻՇՈՏ ԼԱՄԱՆՇԻՆ

5 գործ. վոլս. Սարդուի, Թարգ. Արաքսեանի

Դոն-Քիշոտի դերը կը կատարէ Ա. Վրոյր

Սանչո Պանչոյի . . Պ. Առաքսեան

Այս պիեսի համար պատրաստւած են նոր դէկորացիաներ, ակսէսուար եւ շարժւող հողմաղաց։

Տեղերի գինը սովորականն է

Տոմսակները ծախւում են միմիայն կասսայում.

Սկիզբը է երեկոյեան ճիշտ ժամի 8 ին

1—1

ԱՒԱԳԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունւում եւ ամեն օր բացի կիրակի օրերից։

Ա ռ ա ւ օ տ ն ե ր ը

Ռ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. մի ս բուժարանում, վեներական (սիֆիլիս) եւ մաշկաս. հ.

Կ. Մ. Ձիկովանի—9—10 ժ. աչքի, ականջի եւ ներքին հ.

Կ. Ի. Փզելբեյ—11—12 ժ. կանանց եւ երեխայոց հ.

Ի. Փ. Պռոտասեւիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին եւ երեխայոց հ.

Ե ր ե կ ո ն ե ր ը

Ի. Փ. Պռոտասեւիչ—6—7 ժ.

Ա. Ն. Զպակովսկի—6—7 ժ. Նեարգային (էլէկտրաբուժութիւն). վեներ. և մորթոս. հ.

Փ. Ա. Թարխանով—7—8 ժ. Ներքին և երեխայոց հ.

Ռ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50. կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ս. Տ. Առանիտակի—տանը ծանկահաւաքեամբ, բժշկական մարմնամարզութեամբ դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան

ԲԺՇԿ. ՊԱՏ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՒՆԻ

(Քրի, Ռդի ականջի հիւանդութիւններ)

առ. ՝—11 ժամը, երեկ. 5—7-ը.

ԲԺՇԿԱՊԵՏ ԱՒԵՏ. ԲԱՒԱՅԵԱՆ

Հիւանդների ընդունելութիւնը

առ. ժ. 10—12 երեկ. 5—7

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բառոյական, ուսումնական, արւեստագիտական թերթ

Հրատարակւում է 1901 թ. նոյն ծրագրով և ուղղութեամբ։

Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր. —4 րուբլի։

Հասցէն A la Rédaction de la Revue «Hantesse» Vienne (Autriche) VII/2 Mechitharisten gasse, 4.

3—3

ԶԻՐՎԱՆՁԱՓԷ

Ն Ա Մ Ո Ւ Մ

ԼՒԾՐ

II-դ տպագրութեամբ

մամուլի տակ է, շուտով լոյս կը տեսնի։

Գինն է ճանապարհածախսով 1 ր. Բաժանորդ գրուողները թող դիմեն. Баку, Старо-Молоцейская, д. Лазарева, Александру Абеляну. 10—9

Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց Մոսկւա.

ՊԵՏ ԽՈՐՀՐԴ. ՊԱՆԻԷԼ ՓԱՓՐԻԿԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԿԱՐԳ. ԲԱԳՈՅՆ ՀԱՍՏ ՏԻՒՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 7-րդ յօդւածի հիմամբ Լազարեան ճեմարանի Մասնագիտական դասարանների խորհուրդը իր նոյեմբերի 13-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթերը՝ երկու մրցանակի համար՝ իւրաքանչիւրը 600 րուբլի։

Ա.—«Կազմել բառարան գրաբարում չգտնւած գաւառական հայերէն բառերի, նշանակելով ամեն անգամ թէ յատկապէս ո՞ր գաւառականում են նոքա գործածական և որոշելով նոցա նշանակութիւնը Ռուսերէն կամ միւս Եւրոպական որ և է լեզւով։

Բ.—«Տաւաբումն և դասաւորութիւն Արաբացի մասնագէտների հաղորդած տեղեկութիւնների Հայաստանի և Հայերի մասին, մինչև ԺԴ. դարու վերջը՝ ներկայացրած նիւթերի քննական բացատրութեամբ հանդերձ»։

Ձարադրութիւնները կարող են ներկայացւել Հայերէն կամ Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն։

Լաւագոյն շարադրութիւնը չիշեալ իւրաքանչիւր նիւթերից մէկի մասին կը պարգեւատրւի խորհրդի կողմից վեց հարիւր (600) րուբլի մրցանակով։

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած շարադրութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկու հեղինակների մէջ։

Ձարադրութիւնները պէտք է ներկայացւեն ոչ ուշ քան 13-ն. նոյեմբերի 1902 թ.։

Վերատեսուչ ճեմարանի Պրոֆ. Վս. Միլլեր.

13 Նոյեմբերի, 1900

Մոսկւա.

Գ ե ղ ա կ ա զ մ գ ր ք ո յ կ ն ե ր

Կ. ՊՕՉԸՆԱՆՑ՝ Եզիդի Մկրտչենց տուրք։

ԶԻՐՎԱՆՁԱՓԷ՝ Մելանիա։

Վ. ՓԱՓԱՋԱՆՑ՝ Հայ բօսաների վրանոցներում և Սևրիժի մասը։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ՝ Բանաստեղծութիւններ և պատմւածք։

ՊՈՒՇԿԻՆ՝ Բանաստեղծութիւններ։

ՉՓՏԸ 50 Կ.

Գիմել՝ Թիֆլիս, Ազբիւր-Տարագի համբարձրութեան գրասենեակ։

Доз. ценз. 10-го марта 1901 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип. К. Мартиросіанца Орб. №1-7